18 ՄԱՅԻՍ 1994 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ # 92 (595)

Azg
Azg
armenian daily

SABCO
SABCO
OVERSEAS TRADING LTD.
LIMASSOL CENTRE,
BLOCK B, SUITE 307,
P. O. BOX 6543
TEL +357-5-370962
FAX. +357-5-370945
OUR BANKERS: B. E.'M. O. BANK, LIMASSOL, CYPRUS; FEDERAL BANK OF THE MIDDLE EAST, LIMASSOL, CYPRUS; BANK OF CYPRUS, LIMASSOL, CYPRUS; HELLENIC BANK, LIMASSOL, CYPRUS
Հայաստանի եւ ԱՊՀ երկրների համար
Կիպրոսի եւ Ռոտերդամի պահեստներից
ՇԽՎԽՈՏ, ՄԹԵՐՔ, ԽՄԻՉՔ, ԿՎՃՈՒՅՔ
ուղիղ հասցեատիրոջը՝ նավով եւ իմնաթիռով

Ս. ԵԱՇԱՏԳԵՐ

Կոնգրեսական Բիլբրեյը կոչ է անում դադարեցնել պատերազմը

«Կոնգրեսական Ջեյմս Բիլբրեյը դադարեցնել է հակամարտության կողմերին օրենսդրական նախագիծ է ներկայացրել, որով կոչ է անում վերջ տալ ռազմական գործողություններին եւ շրջափակումներին, որոնք նա որակել է որպես «միջէթնիկական ամենատեսակ հակամարտություն», հաղորդում է Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն:

Բանաձեւում պահանջվում է անհապաղ դադարեցնել կրակը եւ վերսկսել ԵԱՀԽ շրջանակներում ընթացող խաղաղ բանակցությունները: Հակամարտության կողմերին միաժամանակ կոչ է արվում վերացնել տարածաշրջանում առկա բոլոր շրջափակումները: Օրենքի նախագծով Քլինթոնին կոչ է արվում «ակտիվ դեր խաղալ տարածաշրջանում խաղաղության պահպանման եւ մարդու իրավունքների պաշտպանության վերահսկման գործում»:

«Այս հակամարտությունը բավական ծգձգվեց: Սարդկանց տառապանքներին հարկավոր է վերջ տալ: Սա աշխարհի ամենափոխական հակամարտություններից մեկն է: Հակամարտության միջազգայնացման մեծացումը արդեն ծգձգված հակամարտությունը տարածաշրջանային հիմնախնդրի վերածելու իրական հնարավորություն է ստեղծում», նշել է Բիլբրեյը: Կոնգրեսական Բիլբրեյի օրենքի նախագծին միացել են նաեւ մեծամասնության խմբակցությունը՝ դեմոկրաս Դեյիդ Բոնյերի գլխավորությամբ, Կոնգրեսի ստորին պալատի ներկայացուցիչներ դեմոկրաս Սթենի Հոյերը (Մերիլենդի նահանգ), ԵԱՀԽ-ի նախագահ Ռիչարդ Լիմանը եւ էսթեբան Թորեսը (դեմոկրատներ, Կալիֆորնիայի նահանգ): Բիլբրեյը Կոնգրեսի այլ անդամների հետ անցյալ տարի դարաբաղյան հակամարտության կարգավորման քննարկվող ծրագրի հեռանկարների զարգացման նպատակով այցելեց Հայաստան եւ Ադրբեջան: ՆՏ

20,9 մլրդ դոլար նախկին խորհրդայինների եւ այլոց համար

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 17 ՄԱՅԻՍ, ՌԻԱ ՆՈՎՈՍՏԻ: Բիլ Քլինթոնի վարչակազմը մտադիր է օգնության նոր ծրագիր եւ մտադիր է կոնգրեսում այն անցկացնել արդեն այս տարի: «Նյու Յորք թայմզ» թերթի կարծիքով, նոր ծրագիրն ունի հսկայական նպատակներ եւ ավելի մեծ ուշադրություն է դարձնում այնպիսի համընդհանուր խնդիրներին, ինչպիսիք են չքավորությունը, սովը, շրջակա միջավայրի աղտոտումը:

Վարչակազմը մտադիր է կոնգրեսից խնդրել 20,9 մլրդ դոլար: Դրանից 2,9 մլրդ նախատեսված է նախկին խորհրդային բլոկի երկներում «ժողովրդավարության ամրապնդման» նպատակով: Ենթադրվում է, որ 6,4 մլրդ կհատկացվի նախկին Խորհրդային Միության սպառազինությունների կազմախնդմանը եւ Մեծավոր Արեւելքում ու մոլորակի մյուս թեժ կետերում խաղաղարար գործողությունների աղահովմանը: 5 մլրդ է նախատեսված խաղաղ զարգացման նպատակով, ազգաբնակչության աճի կայունացում, շրջակա միջավայրի պաշտպանություն:

35 տոկոսով կավելանա ԱՄՆ-ի բաժինը միջազգային բանկերի մշակած սոցիալ-հաղաքական երկարաժամկետ ծրագրերում:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Բաքուն ամեն կերպ փորձում է առավելագույնը կորզել

Ադրբեջանը մերժեց Մոսկվայի համաձայնագիրը

Երեկ զանգվածային լրատվության միջոցները ըստ երեւույթին շտապեցին հաղորդել, թե մոսկովյան հանդիպման ընթացքում կողմերը Հայաստանը, Ադրբեջանը եւ Լեռնային Ղարաբաղը ձեռք են բերել պայմանավորվածություն կրակի դադարեցման վերաբերյալ, որից հետո հակամարտող կողմերը պետք է ռազմաճակատի գծից 5-10 կմ հեռ քաշեն իրենց զորքերը, իսկ ստեղծված չեզոք գոտում մայիսի 24-ից պետք է տեղաբաշխվեն ռուսական խաղաղարար ուժեր՝ 1800 մարդ: Միաժամանակ հակամարտող կողմերը պետք է 15-20 կմ հեռ քաշեին ամբողջ ծանր տեխնիկան եւ հեռահար հրետանին, իսկ ռուսական ուժերը պետք է տեղաբաշխվեին 49 դիտակակետերում: Ամբողջ գործողության հրամանատար էր նշանակված Ռուսաստանի պաշտպանության փոխնախարարգահ, գեներալ-գնդապետ Գեորգի Կոնդրատեւը: Սակայն պարզվեց, որ խաղաղության հասնելու փուլային ծրագրի վերաբերյալ սկզբունքային համաձայնության առիթով միմյանց շնորհավորելու համար դեռ վաղ է:

Երեկ առավոտյան, երբ Հայաստանի եւ ԼՂՀ ներկայացուցիչները ներկայացել են ստորագրման հանդիսավոր արարողությանը, պարզվել է, որ Ադրբեջանի պատվիրակությունն առանց կողմերից որեւէ մեկին զգուշացնելու, պատճառաբանություններ փաստարկներ ներկայացնելու, վերադարձել է Բաքու: Քաղաքական դիտորդների կարծիքով, ադրբեջանցիների այդ անպատսպի քայլը թելադրված է եղել Բաքվում խաղաղական իրավիճակի սրմամբ: Այստեղ ընդդիմադիր կուսակցությունները սպառնացել են ստորագրման դեմոնստրացիա դնել խաղաղական գործընթացի դեմ: Թեեւ, ըստ խաղաղական դիտորդների, Բաքվում խաղարկվող սցենարները սոսկ մի նոպատակ են հետապնդում՝ հնարավորին չափ ձգձգել ռուսական զորքերի մուտքը Ադրբեջան:

Մինչդեռ, մայիսի 16-ի երեկոյան, ադրբեջանական պատվիրակությունը խնդրել էր մտածելու համար ժամանակ տալ մինչեւ մայիսի 17-ի ժամը 12-ը, որից հետո այնուամենայնիվ մերժել է ստորագրել համաձայնագիրը: Հետաքրքիր է նաեւ, որ այդ ընթացքում Բաքվի ռադիոն հաստատել է հայտարարել, թե Մոսկվա մեկնած ադրբեջանական պատվիրակությունը ոչ մի լիազորություն չուներ ստորագրելու փաստաթուղթը: Երեկ նույնը հաստատեց նաեւ ռուսական «Նովոստի» հեռատեսադիտակը, ավելացնելով, թե համաձայնագրի վերջնական ստորագրմանը խանգարել են երկու հանգամանք. հայերի պահանջը Ղարաբաղը ճանաչել որպես հակամարտության կողմ եւ փաստաթուղթն ստորագրելու ադրբեջանցիների լիազորություն չունենալը: Ռուսական արտգործնախարարությունը նույնպես լավատես չէ: Նրա կարծիքով անհրաժեշտ է հակամարտ կողմերի ղեկավարների քաղաքական կամքը վերջ տալու համար ծգձգվող պատերազմը: Իմիջայլոց, «Նովոստին» հայտնեց նաեւ, թե ադրբեջանական կողմը միայն երեկ առավոտյան է տեղեկացրել, որ իրենը ստորագրելու լիազորություններ չունի եւ վերադառնում է Բաքու լրացուցիչ խորհրդակցությունների համար: Մյուս կողմից, «Ազատություն» ռադիոկայանը տեղեկացրել է, թե ադրբեջանական կողմի հետ նախնական զրույցների ժամանակ հայկական կողմն այն տպավորությունն է ստացել, թե ադրբեջանցիները պատրաստ են ընդունել Ղարաբաղի կարգավիճակը ավելի վաղ հարադարար հաստատելուց անմիջապես հետո: Ինչեւէ:

Համաձայնություն այս անգամ էլ ձեռք չբերվեց, մինչդեռ առ այսօր միջնորդական խաղաղարար որեւէ ծրագիր չի եղել այնքան հստակ եւ միաժամանակ այնքան փոխզիջողական, որքան սա, ուստի եւ խաղաղության հասնելու շանսերը երբեւէ այսքան մեծ չեն եղել:

Հրադադարը կրկին խախտվեց

Թեեւ ղարաբաղյան ճակատներում վերջին երկու օրերին էական փոփոխություններ չեն արձանագրվել, այնուամենայնիվ ադրբեջանական կազմավորումները մայիսի լույս 17-ի գիշերը եւ այսօր առավոտյան նոնականերից եւ ականանետներից գնդակոծել են Մարտակերտի շրջանի Սեյսուլան, Կարմիրավան, Հասանդայա եւ Աղդամի շրջանի Գյուլլիջա, Սումա եւ Ումուդլու գյուղերի ղարաբաղյան պաշտպանական դիրքերը: Նախնական տվյալներով, տուժածներ չկան:

Ըստ ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի, այսօր օրվա երկրորդ կեսին թշնամու դիրքերից հրետակոծվել են նաեւ Շահումյանի շրջանի Գյուլիսան գյուղի ղարաբաղյան բնակիչները: Այստեղ նույնպես տուժածներ չեն եղել: Ժամը 17-ի դրությամբ, ադրբեջանական ուժերը գնդակոծել էին Ֆիզուլու շրջանի եւ Քելբաջարի շրջանի հյուսիսում գտնվող Օմարի լեռնանցքի ղարաբաղյան դիրքերը: Բոլոր դեպքերում հայկական ուժերը ձեռնպահ են մնում պատասխան գործողություններից:

ՀԱՄԱՌՈՏ

Նեոֆաշիստների ցույցերն արգելվեցին Իտալիայում

ՀՌՈՄ, 17 ՄԱՅԻՍ, WSJ: Շաբաթ օրը Վիցենզա քաղաքում տեղի ունեցած նեոֆաշիստների ցույցից հետո Բերլուսկոնիի կառավարությունն արգելեց «քայլներ» անունով ծանոթ սեւազգեստ այդ երիտասարդների ցույցերը, հանդարտեցնելու համար մտավախությունները երկրում նեոֆաշիստների ազդեցության աճի մասին: «Քայլների» ցույցը միտված էր մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներում ի

Բիուտոյին ատոմային ռումբ

ԿԱՐԱՇԻ, 17 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հնդկաստանին զսպելու եւ իր տարածքային ամբողջականությունը պաշտպանելու համար Պակիստանին ատոմային ռումբ է հարկավոր, «Նյու Յորք թայմզի» թղթակցի հետ կայացած հարցազրույցի ժամանակ հայտարարել է Պակիստանի կառավարության վարչապետ Բենազիր Բիուտոն: Մեզ համար ազգային անվտանգության ապահովումը գոյատեւման հարց է, ինչի որ թե իր չափերով, թե ռազմական առումով Հնդկաստանը հնգակի գերազանցում է Պակիստանին»:

ՍԵՐՇԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Ոչ է մեղավոր Հեբրոնի զոհերի համար

ԹԵԼ ԱՎԻՎ, 17 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երկուշաբթի երեկոյան ավելի քան 15 մարդ է վիրավորվել Հորդանան գետի արեւմտյան ափում գտնվող Հեբրոն քաղաքում: Այդ տխուր արդյունքին է հանգեցրել մի խումբ զինված հրեաների վերաբնակների եւ տեղացի արաբների բախումը: Հեբրոնում տեղաբաշխված միջազգային դիտորդների ներկայացուցիչ Բյոռնո Սորենսենը (Դանիա) հայտարարեց, թե առայժմ չի կարող որոշել, թե ով է պատասխանատվություն կրում միջադեպի համար: Պաղեստինի ազատագրման կազմակերպության Թունիսում գտնվող կենտրոնակայանում Յասեր Արաֆաթի խորհրդական Մարվան Կանաֆանին պահանջել է հրեա վերաբնակներին էվակուացնել Հորդանան գետի արեւմտյան ափի բոլոր քաղաքներից: Նրա ասելով, դա անհրաժեշտ է ոչ միայն այն բանի համար, որ աղահովվի պաղեստինյան բնակչության անվտանգությունը, այլեւ նրա համար, որ հաշտության ընթացքը պաշտպանվի ծայրահեղականների սադրանքներից:

Հեբրոնում տեղի ունեցած ընդհարումը առաջին լուրջ միջադեպն է այդ քաղաքում միջազգային դիտորդների տեղաբաշխման պահից ի վեր, որոնք մայիսի 8-ից ձեռնամուխ են եղել իրենց առաքելության իրականացմանը:

ԹԲԻԼԻՍԻ

Թատրոնի պայթյունը լայն արձագանքներ է տալիս

ԹԲԻԼԻՍԻ, 17 ՄԱՅԻՍ, ՌՆԱՐՔ: Վրաստանի խորհրդարանն այսօր իրավակարգի մարմիններին հանձնարարել է ամենակարճ ժամկետում ի հայտ բերել Թբիլիսիի հայկական դրամատիկական թատրոնում ահաբեկչական գործողություն կատարած անձանց: Մայիսի 15-ին ձեռնարկված այդ գործողության հետեւանքով վիրավորվել է մոտ 20 մարդ, այդ թվում երեխաներ: Ինչպես հայաբնակ Ալավերդալակի շրջանի անունից հայտարարեց Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ֆերդինանդ Ալեքսանյանը, «այդ ապրանքը երկու ժողովուրդների փոխհարաբերություններ բարդացնելու նպատակ էր հետապնդում»: Վրաստանի խորհրդարանականները իրավաղան մարմիններին նաեւ հանձնարարել են պատգամավորներին զեկուցել այդ գործով կատարվող հետաքննության արդյունքների մասին:

Յու Պի Այ. Ռայբը, ԻՏԱՐ-ՏԱՍՍ լրատվական գործակալությունների երեկ եւ նախորդ օրը հաղորդած եւ «Ազգի» խմբագրությունում ստացված առանձին տեղեկություններն իրարից տարբեր պատկերներ են տալիս կիրակի օրը Թբիլիսիի Պետրոս Ադամյան թատրոնում պատահած պայթյունի վերաբերյալ, հատկապես ինչ վերաբերում է զոհերի եւ վիրավորների թվին ու վիճակին: Մասնավորապես նկատելի է, որ Վրաստանի մայրաքաղաքից ստացված տեղեկությունը խիստ տարբերվում է վերոհիշյալ գործակալությունների հաղորդածից: Այսպես, Թբիլիսիում լույս տեսնող «Վրաստան» հայկական թերթի խմբագիր Վահան Բայբուրդյանը երեկ հեռախոսով «Ազգին» հաղորդած տեղեկության ընթացքում ասնեց, թե մանկական ցերեկային ներկայացման ընթացքում տեղի ունեցած ահաբեկչական այդ պայթյունից ոչ ոք չի զոհվել եւ թե Ռոյթերի ու այլ գործակալությունների հաղորդած լուրերն այդ մասին անհիմն են: Նրա ասելով, ներկա դրությամբ հիվանդանոցում բուժման ենթակա են ընդամենը 5 հոգի, որոնցից 3-ը երեխա, որոնք վիրավորվել են ռուսական փամփուշտներից: Նա հավաստիացրեց, թե 5 վիրավորներից միայն մեկն է ծանր վիճակում թատրոնի պարի ուսուցի, 61-ամյա Միխայել Հովսեփյանը, որ պայթյունի պահին հետ նետվեց է տաք քարի ու այլ գործակալությունների հաղորդած լուրերն այդ մասին անհիմն են: Նրա ասելով, ներկա դրությամբ հիվանդանոցում բուժման ենթակա են ընդամենը 5 հոգի, որոնցից 3-ը երեխա, որոնք վիրավորվել են ռուսական փամփուշտներից: Նա հավաստիացրեց, թե 5 վիրավորներից միայն մեկն է ծանր վիճակում թատրոնի պարի ուսուցի, 61-ամյա Միխայել Հովսեփյանը, որ պայթյունի պահին հետ նետվեց է տաք քարի ու այլ գործակալությունների հաղորդած լուրերն այդ մասին անհիմն են: Նրա ասելով, դա անհրաժեշտ է ոչ միայն այն բանի համար, որ ապահովվի պաղեստինյան բնակչության անվտանգությունը, այլեւ նրա համար, որ հաշտության ընթացքը պաշտպանվի ծայրահեղականների սադրանքներից:

Հեբրոնում տեղի ունեցած ընդհարումը առաջին լուրջ միջադեպն է այդ քաղաքում միջազգային դիտորդների տեղաբաշխման պահից ի վեր, որոնք մայիսի 8-ից ձեռնամուխ են եղել իրենց առաքելության իրականացմանը:

Տես էջ 2

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԱՇԽԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ

Ամեն ինչ կախված է Վրաստանի իշխանություններից

«Վրաստանում տիրող հակահայկական մթնոլորտը մեզ իրոք անհանգստացնում է», երեկ զրույցի ընթացքում հայտնեց ՀՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ Շավարշ Քոչարյանը:

Նրա ասելով, «Ազգ» թերթն արդեն իրավացիորեն անդրադարձել է, թե հակահայկական տրամադրությունները Վրաստանում տարածվել են աբխազահայերի հետ կապված տեսաֆիլմերի ցուցադրությամբ, իսկ վերջին շրջանում դրանց թվին են ավելացել նաեւ Խոջիվանքի գերեզմանների ոչնչացումը, հայկական բաստոնում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները:

Հայաստանի ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովը այդ կապակցությամբ մի հայտարարություն է նախագծել նախաստորագրել, որը ներկայացվել է ԳԽ նախագահությանը եւ մեղմացված տարբերակով ընդունվել: Սակայն, Շավարշ Քոչարյանի ասելով, գործընթաց է առաջացնում Հայաստանի արտգործնախարարության հայտարարությունը, ուր միակ տողը, որ վերաբերում է վրացական իշխանություններին, օբյեկտիվության խոսք է:

Այդ առումով ավելի հավասարակշռված էր ՀՀ նախագահի հայտարարությունը, ասաց նա: Մինչդեռ, Հայաստանի ԱԳՆ-ն իր վրա է վերցնում Վրաստանի արտգործնախարարության ֆունկցիան, եւ հայտարարում, թե դա ինչ-որ երրորդ ուժի գործն է: Նման գնահատականները կարող էր տալ վրացական կողմը, մանավանդ որ, դեռեւս պարզ չէ, թե որքանով արդյունավետ կլինեին Վրաստանի իշխանությունների ձեռնարկած միջոցառումները: «Երբ որեւէ անհրաժեշտություն չկար, Հայաստանի ԱԳՆ-ն կտրուկ հայտարարություններ էր անում Վրաստանի նկատմամբ եւ անգամ վարկաբեկում, իսկ հիմա, երբ անհրաժեշտ է, ցուցաբերում է անհասկանալի վերաբերմունք», ասաց Շավարշ Քոչարյանը: Նրա կարծիքով, ներկա փուլում ամեն ինչ կախված է Վրաստանի իշխանություններից: Եթե նրանք կարողանան բացահայտել ահաբեկիչներին, արդյոք դրական ազդեցություն կունենա հայ-վրացական հարաբերությունների վրա, եւ ինչ-որ տեղ կհանգստացնի նաեւ վրացահայությանը:

ՀԱՍՄԻԿ ԱԱՍՏԱՏՈՒՐ.

ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ռուսների հեռանալու հիմնական դատճառը դդրոցների հարցն է

Այսօր Հայաստանում կան 8 կազմակերպված ազգային համայնքներ, որոնք գոյացել են տարբեր ժամանակներում եւ տարբեր դատճառներով: Կան համայնքներ, որոնց ներկայացուցիչները դատմության ընթացքում կորցրել են իրենց հայրենիքը եւ ժամանակի ընթացքում ներգաղթել Հայաստան: Այդդիսիք են էրդական, եզդիական, ասորական համայնքները: Կան համայնքներ, որոնց ներկայացուցիչները, թեեւ ունեն մայր հայրենիք, բայց դատմական իրադարձությունների հետեւանքով հայտնվել են Հայաստանում (հույներ, ռուսներ, իրանցիներ): Կան եւ գերմանական եւ ակրտինական համայնքներ, որ կազմավորվել են համեմատաբար նոր ժամանակներում եւ այն էլ տարբերաբար: Բացի այդ, ազգային համայնքների կամ Հայաստանում աբխազների ներկայությամբ ստեղծվում հեռանալու հետեւանքով: Բացի դրանից «Ազգային համայնքներ Հայաստանում», գործակալությունը նպատակ ունի լուսաբանել համայնքների հետ առնչվող հիմնական խնդիրները:

ցինս Հայաստանում ռուսական մշակույթի դահիճանման միջազգային կենտրոնն է: Ստեղծվել է ֆոնդ՝ տաղանդավոր երեխաներին, անկախ ազգությունից օգնելու համար: Հայաստանի ռուսական համայնքը սերտ կապեր ունի Ռուսաստանի, հատկապես Կրասնոդարի երկրամասի եւ Ստավրոպոլի մարզի հետ եւ դեսպանական մակարդակով օժանդակություն է ստանում Ռուսաստանից: Հայաստանում լույս են տեսնում ռուսատար մի շարք թերթեր: Թեեւ դրանք անմիջապես կապ չունեն համայնքի հետ, բայցեւայնպես հասցեագրված են հիմնականում ռուսալեզու ազգաբնակչությանը: Կան նաեւ ռուսերեն ռադիոհաղորդումներ: Երեւանում գործում է Սանկտ-Պետերբուրգի անվան ռուսական դրամատիկական թատրոնը: Երեւանում գործում է Քանաքեղի եւ Նորագավիթի ռուս ուղղափառ եկեղեցիները: Եկեղեցիներ կան նաեւ Վանաձորում եւ Արտաշատի շրջանի Դիմիտրովո գյուղում:

«Հայաստանի անկախությունից հետո արդյոք ռուս ազգաբնակչության նկատմամբ դիտվե՞լ են հալածանքներ, կա արեւ փոփոխություն հայ-ռուսական հարաբերությունների մեջ Հայաստանի ներսում, ի՞նչն է ռուսական համայնքի ներկայացուցիչների Հայաստանից հեռանալու հիմնական դատճառը», այս հարցերով դիմեցինք «Ռուսիա» ընկերության նախագահ տիկին Գալինա Չեռնոուսովային:

«Ռուս ազգաբնակչության նկատմամբ հալածանքներ չեն եղել, չեն արձանագրվել դեպքեր, երբ ազգային դատկանելության դատճառով աշխատանքից, զբաղեցրած դաշտնից կամ բնակության վայրից ռուսները հեռացրած կամ վտարած լինեն: Հայաստանում ազգային խտրականություն չի եղել եւ չկա», ասաց տիկին Չեռնոուսովան: Միակ ցավոտ հարցը ռուսական համայնքի համար տիկին Չեռնոուսովան համարեց կրթությունը: Բանն այ է, որ ռուսական համայնքը խիստ դժգոհ է, որ Հայաստանում փակվեցին ռուսական դդրոցներ. բուհերի շատ ռուսական բաժիններ: Եվ այսօր Հայաստանում ռուս երեխաներին ստիպում են հաճախել հայկական դդրոցներ: Հանրապետությունում 82 ռուսական դդրոցից այժմ գործում է ընդամենը 4-ը, այն էլ շրջաններում, իսկ Երեւանում երեսնի 33 ռուսական դդրոցներից այսօր մեկն անգամ չկա: Մինչդեռ 14 դդրոցներում կազմակերպված են ռուսական դասարաններ: Բացի այդ, դահանջվում է գրասենյակային ոչ գրագրությունը կատարել հայերենով: Այս փաստարկները բերելով, «Ռուսիա» ընկերության նախագահը եզրակացրեց, որ փաստորեն ռուսներին անուղղակի ձեւով արտաքսում են Հայաստանից:

Լեզվի խնդիրը շատ խորն արմատներ ունի: Դեռեւս ամբողջատիրական կարգերի ժամանակ ռուսական դդրոցներում ռուս երեխաներին արտոնված էր չմասնակցել հայոց լեզվի դասերին: Դրա հետեւանքով ռուսները Հայաստանում գրեթե չգիտեն հայերեն, առավել եւս գրել կարդալ: Այսօր արդեն, երբ Հայաստանը անկախ երկիր է եւ ունի իր միակ դետական լեզուն, ռուս համայնքը որոշել է ուսանել հայերեն, որպեսզի կարողանա ներգրավվել տարբեր դորտների աշխատանքների մեջ: Այս հարցով համայնքը դիմել է տարբեր օրակների դաշտանցքերը կազմակերպելու համար Երեւանում բացել ռուսական համալսարան: Գալինա Չեռնոուսովան այս ցանկությունը բացատրեց նրանով, որ Հայաստանում բնակվող ռուսները, առանձնապես չլինելով վճարունակ, չեն կարող մեկնել Ռուսաստան ուսանելու: Եվ Երեւանում բացվելիք համալսարանը հնարավորություն կտա ռուսներին կրթությունը շարունակել Հայաստանում: Համայնքը ցանկանում է բարբարական 1 ժամ հեռուստաթերթ ունենալ օվվելու համար Հայաստանի ոչ տարածքում ապրող ռուսների հետ, նաեւ հնարավորություն ընձեռել հոգեւոր առաջնորդներին քարոզներ կարդալ ռուս ուղղափառ հանրության համար: Համայնքը նաեւ քաղաքային իշխանություններից ակնկալում է մի հարմարավետ շենք ստանալ ռուսական տուն սեղծելու համար: Այս տանը կկազմակերպվեն հավաքույթներ, թեյախմություն, կտոնվեն ազգային-եկեղեցական տոներ:

ԼՏ

ՏԱՂԹԹ

Երեւանում կբացվի վարչական կադրերի դդրոց

Մայիսի 17-ին ՀՀ վարչապետ Հասմիկ Բագրատյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆրանս՝դը Հարթինգին: ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից հայտնեցին, որ հանդիպման ընթացքում քննարկվել են Երեւանում վարչական կադրերի դատրաստման դդրոցի հիմնադրման հետ կապված հարցեր: Այդ նդատակով Երեւանում է գտնվում Ֆրանսիացի մասնագետների մի խումբ, որը ղեկավարում է Լիլ քաղաքի կառավարման տարածքային կադրերի ռեգիոնալ ինստիտուտի տնօրեն Ֆիլիպ Ժորժը:

Հայկական նոր ներկայացուցչություն Կրասնոդարում

ԿՐԱՍՆՈԴԱՐ, 17 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐԲ: Կրասնոդարի երկրամասի վարչակազմին առընթեր ստեղծվել է Հայաստանի առեւտրական ներկայացուցչություն: Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության եւ Կրասնոդարի երկրամասի էկոնոմիկայի դեդարտամենտի միջեւ արձանագրություն է ստորագրվել երկրամասի տարածքով բեռների փոխադրման կարգի մասին: Հայաստանի էկոնոմիկայի նախարարության տրամադրած տեղեկությունը համաձայն, ներկայացուցչությունը դետք է համակարգի տարանցիկ բեռների ողջ ծավալը եւ նախնական հայտեր ընդունի ինչդես դետական, այնդես էլ ոչ դետական ձեռնարկություններից ու մասնավոր անձանցից:

Հոբելյանական մեծաղադրամների մրցույթ

ԵՐԵՎԱՆ, 17 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐԲ: Հավաքածուների համար նախատեսվող ոսկե եւ արծաթե մեծաղադրամների առաջին էսքիզներն արդեն ներկայացվել են մրցույթին, որը մայիսի 28-ին նշվող անկախության հռչակման օրվա առթիվ հայտարարել է Հայաստանի կենտրոնական դրամատունը: Հատուկ հանձնաժողովը դետք է որոշի ներկայացված նմուշներից լավագույնները: Հեղինակների համար նախատեսված է դրամական մրցանակ 10 հազար դրամ (առաջին) եւ եւս երկու մրցանակ՝ 5 հազարական դրամի չափով: Մրցույթի արդյունքները կամփոփվեն նշանակալից տարելիցի նախօրեին:

ՈՒՍՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ
Հրատարակության դ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, տելեֆոն 243266 CPBR SU
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՐԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տարածները ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆ
Apple Macintosh համակարգչային ծառայությունը «Ազգ» թերթի
Azg
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Published in U.S.A. by AZG Publishing Co., 22122 Sherman Way, Suite 203, Canoga Park, CA 91303, Call (818) 598-0423 Fax (818)340-9819 for subscription rates.
Publisher - Հրատարակիչ Dr. Krikor Krikorian - Դոկտ. Գրիգոր Գրիգորեան
Executive Director - Տնօրէն Vartan Karaoghlanian - Վարդան Գարաօղլանեան
Production Manager - Ralfi Shoubookian Արտադրութիւն Բաֆֆի Շուտուրեան
«ԱԶԳ» օրաթերթ հաղորդում է ԱՄՆ «ՍՊՈՒՆԿԱ» ՍՊԸ-ի համակարգչային կապով հեռախոս 7 8852 281425, ֆաքս 7 8852 285082
E-MAIL INTERNET ROOT YEREVAN @ REX IASNET COM

ԹԲԻԼԻՍԻ

Հայկական թատրոնի դայթյունը լայն արձագանքներ է տալիս

սկիզբը էջ 1

Միջազգային վերահիշյալ աղբյուրներից երեկ ստացած մեր տվյալներով մայիսի 29-ին կուդարկի Թբիլիսի մասնակցելու ամենամյա Վարդատոնին, առավել սերտ աջակցություն ցույց տալու նյութապես եւ բարոյապես տուժած թատրոնին, որ դայթյունից առաջ հիմնովին վերանորոգվել էր:

Այս կապակցությամբ Վ. Բայբուրյանը մեզ հաղորդեց, որ նախագահ Շեւարդնաձեի կարգադրությամբ 45-50 միլիոն ռուբլի գումար է նախատեսվել դայթյունի հետեւանքները վերացնելու նդատակով: Երեկ Վրաստանի արտգործնախարար Ալեքսանդր Չիքվաիձեն հրավիրել է ՀՀ գործերի ժամանակավոր հավատարար Լեւոն Խաչատրյանին եւ հանգամանորեն տեղեկացրել ահաբեկչական գործողության մեղավորներին բացահայտելուն եւ դատժելուն ուղղված միջոցառումների մասին: Չիքվաիձեն հույս է հայտնել, որ նման արարք չի ազդի հայերի եւ վրացիների բարեկամության վրա:

«Փաստը» իր հերթին հաղորդեց, թե երեկ Էդուարդ Շեւարդնաձեն հեռաձայնել է նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Վերջինիս մայիսի 16-ի հայտարարության առթիվ, որ վերաբերում էր դդրեգական նույն միջադեպին: Շեւարդնաձեն հավատիացրել է, որ Վրաստանի իշխանությունները ամեն ինչ կանեն հանցագործությունը բացահայտելու համար:

ՀԱՄԱՌՈՏ

Գյումրեցիների համար ռուբլին ավելի՞ ընդունելի է

Գյումրիում առեւտուրը կատարվում է ինչդես ռուբլով, այնդես էլ դրամով: Սակայն Գյումրիի շուկայում սենդամբերը վաճառվում է ռուսաստանյան ռուբլով: Ինչու են առեւտրականները գերադասում ռուբլին, նրանց կողմից նշվեց երկու հիմնական դատճառ. առաջին՝ հիմնականում ադրանքները բերվում են Ռուսաստանից, երկրորդ՝ ռուբլին ավելի կայուն է: Նշենք նաեւ, որ ռուբլով առեւտրին նդատասում է նաեւ ռուսական բանկի Գյումրիում տեղակայվելը: Գյումրիի շուկայում մայիսի 17-ին սենդամբերը վաճառվել է հետեւյալ գներով. միս՝ 1 կգ 2500 ռուբլի, կարագ՝ 1 կգ 4500 ռուբլի, շաքարավազ՝ 1 կգ 1200 ռուբլի, ձու (30 հատ)՝ 2500 ռուբլի, արեւածաղկի ձեթ՝ 1 լ 2300 ռուբլի, հաց՝ 1 կգ 250 ռուբլի: Դրամով վաճառքի դեպքում գինը որոշվում է դրամի եւ ռուբլու հետեւյալ փոխարժեքով. 1000 ռուբլի - 240 դրամ:

ԼՏ

Գյումրիում 11 հազարից ավելի գործազուրկ

Գյումրիի զբաղվածության կենտրոնի տնօրեն Լեւոն Մուրադյանը հայտնել է, որ մայիսի 13-ի դրությամբ կենտրոնում գրանցված է 15759 մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ են ստացել 11120-ը (8377-ը կանայք են): Մուրադյանը նշեց, որ գործազուրկներից 1537-ը աշխատանքից զրկվել է կրճատումների հետեւանքով: Մայիս ամսին աշխատանքի է տեղավորվել միայն 5 մարդ: Կենտրոնը դրամական նպաստ տրամադրում բոլոր գրանցվածներին, որը ամսիկի 1-ից կազմել է 375 դրամ: Երկրորդ եռամսյակում նպաստ տալու համար կենտրոնը տնօրինում է ընդամենը 15500 դրամ գումար:

ԼՏ

Սեւանա լճի ջրի բացթողումը չի հաջողվում էապես կրճատել

ՀՀ բնության եւ շրջակա միջավայրի դահդանության նախարարության ջրային ռեսուրսների վարչության դետ Հոսնիկ Կիրակոսյանը հայտնել է, որ ի տարբերություն նախորդ տարիների առաջ տեղումների, այս տարի սդասվում են միջին տեղումներ, որոնց ազդեցությունը Սեւանի մակարդակի վրա մեծ չի լինի: ՀԷԿ-երի համար բաց թողնվող ջրի ֆանակը 1994 թ-ի հունվարի 1-ից մինչեւ մայիսի 5-ը կազմել է 520 մլն. խմ: Ըստ ՀՀ կառավարության որոշման նախագծի, 1994թ. ոռոգման նպատակներով նախատեսվում է օգտագործել 260 մլն. խմ ջուր: 1994 թ. մայիսի 7-ի դրությամբ Սեւանի ջրի մակարդակը 1897,36 սմ է, իսկ նախորդ տարվա նույն օրվա տվյալն է 1897,79 սմ: Ապրիլի 14-ի ժամը 9-ից մինչեւ մայիսի 4-ի ժամը 14-ը լճից ջրի բացթողումը դադարեցվել է, սակայն վերսկսվել է գազատարի վթարից հետո:

ԼՏ

digitised by A.R.A.R.@

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՕՍԻԱ

Համաձայնության դայմանագիր

Մոսկվայում հանրային համաձայնության դայմանագրի ստորագրմից հետո համանման երեւույթներ են սկսվել նաեւ Ռուսաստանի ազգային հանրապետություններում: Կիրակի օրը՝ մայիսի 15-ին, Վլադիկավկազի դրամատիկական թատրոնի շենքում ստորագրվեց Հյուսիսային Օսիայի բոլոր ազգային համայնքների եւ հասարակական քաղաքական շարժումների համաձայնության դայմանագիր: Հս. Կովկասի այդ փոքր հանրապետությունում, որտեղ կողք կողքի ապրում են 60-ից ավելի ազգությունների ներկայացուցիչներ, անչափ կարեւոր է դահպանել համաձայնությունը, հատկապես այժմ, արտակարգ դրության ռեժիմի գործողության դայմաններում, որը երկարաձգված է մինչեւ մայիսի 30-ը: Դայմանագիրն ստորագրեցին կազակների եւ չեչենական համայնքի ներկայացուցիչները, հայ համայնքի ներկայացուցիչը՝ եւ հոգեւորականության ղեկավարները: Դայմանագիրն առաջինն իր ստորագրությամբ վավերացրեց Հս. Օսիայի նախագահ Ախսարբեկ Գալազովը: Նա հայտարարեց, որ դա բաս կարեւոր փուլ է Հս. Կովկասում կայուն խաղաղության հաստատման ճանապարհին: Հուսադրող է նաեւ այն փաստը, որ դայմանագրի ստորագրումը տեղի ունեցավ այն դահին, երբ սկսել էին երկյուղներ արտահայտվել օսերի ազդեցության ուժեղացման առնչությամբ, ինչը հատկապես մտահոգում է հանրապետության կազակաբնակ շրջանների բնակչությանը: Ըստ երեւույթին ազգամիջյան կռվերի ամրապնդման այս երեւույթը կանխարգելվի Հս. Կովկասի նաեւ մյուս հանրապետություններում: Մոտ ժամանակ ներս նախատեսված է նման համաձայնագիր ստորագրել նաեւ Կաբարդա Բալկարիայում:

Է. Բ.

ԴԱՂՍՏԱՆ

Ի՞նչ էր տեղի ունեցել Դերբենտում

ՄԱԽԱՉԿԱԼԱ, 17 ՄԱՅԻՍ, ՏՆԵՐԲ. Հայտնի են դարձել մայիսի 2-ին Դաղստանի Դերբենտ քաղաքում տեղի ունեցած ազգամիջյան հուզումների որոշ մանրամասներ: Այդ քաղաքի բնակչության հիմնական մասը կազմում են լեզգիներ ու ադրբեջանցիներ:

«Ազատություն» ռադիոյի հաղորդման համաձայն, դատահարի վայր ժամանած Ադրբեջանի ազգային ֆրդակականության գծով դետական խորհրդական Իդայար Օրուջեւն ասաց, որ ընդհարում է տեղի ունեցել հանցախմբերի միջեւ, որի հետեւանքով սպանվել են մեկ ադրբեջանցի, մեկ լեզգի եւ մեկ տաբասարանցի: Կան վիրավորներ: Ադրբեջանի դեկավարության այն կարծիքին, թե հանցագործությունը կատարվել է կենցաղային հողի վրա, միացավ նաեւ դաբեռնական Մախաչկալան:

Մինչդեռ այդ դոքերական իրադարձություններից հետո Դերբենտի ադրբեջանական, լեզգիական եւ տաբասարանական համայնքները կազմակերդեցին հանրահավաքներ յուրաքանչյուրն առանձին, դահանջելով գնահատական տալ իրադարձություններին, ի հայտ բերել եւ դատժել իսկական մեղավորներին, դաբեռնաբրդ անել Դերբենտի գործադիր իշխանության դեկավարին ծագումով ադրբեջանցի Փաշաբեկովին եւ քաղաքի իրավադատ մարմինների դեկավարներին: Հանրահավաքներում հնչեցին նաեւ հրահրիչ կոչեր, որոնք կարող էին լրջորեն սրել ազգամիջյան հարաբերությունները:

Մեկնաբանելով այդ դեդքերը, «Ազատություն» ռադիոն այն կարծիքն է հայտնել, որ չի կարելի նկատի չառնել մի բաս կարեւոր փաստ, այն է, թե 1993 թվականի ամռանը Ռուսաստանի արդարադատության նախարարությունը արգելել էր «Սադվալ» լեզգիական ազգայնական ընկերության գործունեությունը, որը տարածքային դահանջներ է առաջ քաշում Ադրբեջանի նկատմամբ: Այս տարի «Սադվալը» նորից է գրանցվել Ռուսաստանի Դաբեռության արդարադատության նախարարության կողմից, ընկերության կենտրոնակայանը Մահաչկալայի գյուղից տեղափոխվել է Դերբենտ: Հատկանշական է, որ վերոհիշյալ դեդքերից երկու օր անց Մահաչկալայում նախատեսվում էր Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Դաղստանի ներկայացուցիչների ոչ դաբեռնական հանդիդում, որի բացում նախատեսվում է քննարկել Ռուսաստանի Դաբեռության եւ Ադրբեջանական Հանրապետության սահմանի հարցը:

Այնդես որ, դատահածում ամենինչ չէ, որ բացատրվում է այսդես կոչված, կենցաղային դատճառներով:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Վրաստանին օգնելու ծրագրի իրականացումը կսկսվի 1,5 ամսից

ԺՆԵՎ, 17 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վրաստանին օգնելու ծրագրով, որը մշակել է Վերակառուցման ու զարգացման միջազգային դրամատունը, նախատեսվում է առաջին փուլում հանրապետությանը հատկացնել 50 միլիոն դոլար: Դաբեռնաթղթե ծրագիրը կսկսի գործել 1,5-2 ամիս անց դրամական տնօրենների խորհրդի կողմից հաստատվելուց հետո, հաղորդել է դրամատան եվրոդական եւ կենտրոնասիական բաժանմունքի դետ Վ. Գրեյսը:

Մենք ֆինանսավորում ենք միայն մանրակրկիտ մշակված ծրագրերը, ընդգծել է Գրեյսը: Վերակառուցման ու զարգացման միջազգային դրամատունը չեմբր չի տալիս, դրամատունը տալիս է նախագծի փորձնական գնահատականը եւ ստուգում նրա վերջնական դատասխանը, իսկ այնուհետեւ վերահսկում դրա իրագործումը: Բացի կոնկրետ նախագծերից, Միջազգային դրամատունը ֆինանսավորում է տնտեսության մեջ իրականացվող կառուցվածքային վերակառուցումը, խորհրդատվական աղաստարկումներ տրամադրում:

Միջազգային դրամատան փոխառությունները տրվում են երկար ժամանակով առնվազն 15 տարով, իսկ տոկոսակրդարը այնդիսին է, որդիսին Վրաստանի կառավարությունը դժվար թե կարողանա ստանալ որեւէ տեղ արեւմտյան երկաներում, նշել է Գրեյսը:

Մինչդեռ Վրաստանում աղաբդակաղ զամբյուղը կազմում է 14 մլն կուդոն, իսկ նվազագույն աշխատավարձը եւ կենսաբոշակը ընդամենը մի քանի տասնյակ հազար կուդոն: Զառամյալների կենսաբոշակային աղահովման համար հարկավոր է 4 տրիլիոն կուդոն, բայց միջոցներ չկան:

ԿԱՊՐՈԼԻՏ

ՀԱՐԳԵԼԻ ԱՅՑԵԳՈՐԾ

«Կապրոլիտ» ֆիրման վաճառում է կենսահումուս, որը հավասարը չունի օրգանական եւ հանքային պարարտանյութերի շարքում:

Վերջերս «Կապրոլիտը» սկսել է վաճառել նաեւ կարմիր կալիֆորնիական որդեր, որոնց օգնությամբ ստացվում է կենսահումուսը:

Ձեզանից յուրաքանչյուրն իր ամառանոցում կարող է բացաղային օրգանական բարիոններից տարիներ շարունակ արտադրել անհրաժեշտ քանակի բարձրորակ կենսահումուս: Որդերի հետ միասին տրամադրում ենք նաեւ կենսահումուսի ստացման տեխնոլոգիա:

Զանգահարեք օրվա ցանկացած ժամի. զանգահարեք հեռ. 55.72.06

ECONOTRANS

Սիրալիր ընդունելություն

Բարձրակարգ սպասարկում

Մատչելի գներ

ECONOTRANS

ԷԿՈՆՈՏՐԱՆՍ

Բոլոր նրանք, ովքեր ունեն ԱՄՆ մեկնելու թույլտվություն, կարող են դիմել ԷԿՈՆՈՏՐԱՆՍ-ի Երեւանյան գրասենյակ

Թռիչքները տեղի կունենան մայիսի 22-ին, ապրիլի 5-ին այնուհետեւ՝ յուրաքանչյուր 14 օրը մեկ

Միակ ուղիղ չվերթը Երեւան-Լոս Անջելես

հասցեն Կապյան-6 զանգահարել ամեն օր ժ.10-17-ը, բացի կիրակի օրերից

ԼՈՍՅԱՆ ՏՈՊԱՐ

ՈՒԶԲԵԿԱՍՏԱՆ

Քարիմովը տնտեսական միասնացման կոչ է անում

ՏՈՍԿՎԱ, 17 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ներկայումս այցով Նատրոնիայում գտնվող Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովը նախկին ԽՍՀՄ հանրապետություններին խոսքով տնտեսական միասնացման կոչ արեց:

«Ես հանդես եմ գալիս նախկին ԽՍՀՄ հանրապետությունների տատանոյր տնտեսական միասնացման օգտին, որի բացակայության դատճառով տուժում են ամենքը՝ Ռուսաստանը, Ուզբեկստանը, Ղազախստանը, Կրդդզստանը եւ մյուս՝ բոլորը», նշեց Իսլամ Քարիմովը: Նա ընդգծեց, որ Տաշքենդը դաբեռդանում է ԱՊՀ շրջանակներում հանրապետությունների տնտեսական միության ստեղծման գաղափարը: Հենց այդ դատճառով ադրիլի վերջերին Ղազախստանը, Կիրգիզիան եւ Ուզբեկստանը միասնական տնտեսական տարածք ստեղծելու համաձայնագիր կնքեցին, ասաց նախագահը: Քարիմովը նշեց, որ եթե հանրապետությունների տնտեսական միությունը բաց է Ռուսաստանի եւ նախկին ԽՍՀՄ մյուս բոլոր հանրապետությունների համար եւ այդ մասին հաղորդվել է Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին:

«Մենք կարծում ենք, որ եթե հանրապետությունների կողմից ստեղծվող միասնական տնտեսական տարածքն ամբողջ ԱՊՀ շրջանակներում կազմավորվելիք տնտեսական միության նախատիպ է», ասաց նախագահը: Նա կտրականապես հերքեց մամուլում արտահայտված այն դնդումները, թե Միջին Ասիայի հանրապետությունները անկանգնում են մյուս հանրապետություններից:

Իսլամ Քարիմովը լուրջ կնսկատենք հայտնեց ԱՊՀ հանրապետությունների Եվրասիական միության ստեղծման գաղափարի առնչությամբ: Նա կոչ արեց «տնտեսական միասնացման միջոցով լիովին իրագործել ԱՊՀ գաղափարը»:

«Ռուսաստանն այսօր կորցնում է Ուզբեկստանի տուկան», այսդիսի նախազգուշացումով հանդես եկավ Ուզբեկստանի նախագահը: «Մոսկվայում, դատելով ամեն ինչից, չկա այն բանի ըմբռնումը, որ Ռուսաստանը կարող է Ուզբեկստանից դուրս

մղվել մեր հանրապետության հեռանկարային տուկայի համար ուժեղացող մրցակցության հետեւանքով», ասաց նախագահը: Նա կոչ արեց ստեղծել ռուսաստանա-ուզբեկական համատեղ ձեռնարկություններ նախկին ԽՍՀՄ ժամանակներից երկու երկրների արդյունաբերական ձեռնարկությունների ունեցած սերտ կապերի հիմքի վրա:

«Մենք համատեղ ձեռնարկություններ ենք ստեղծում աշխարհի տարբեր երկրների ֆիրմաների հետ, բայց ներկայումս հանրապետությունում եղած շուրջ 1500 համատեղ ձեռնարկությունների թվում չկա ոչ մի ռուսաստանա-ուզբեկական ընկերություն», նշեց նախագահը: Նա նաեւ ասաց, որ երկու հանրապետությունների կողմից համատեղ ձեռնարկություններ ստեղծելու անհրաժեշտությունը համակարծիք է նաեւ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը:

ՏԱՍՏՈՍ

Բորիս Ելցինն ամենաուժեղն է

ՍՈՍԿՎԱ, 17 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօրվա դրությամբ 1996 թ. նախագահական ընտրությունների ամենաուժեղ թեկնածուն Բորիս Ելցինն է, եւ Ռուսաստանի ընտրություն կուսակցությունը կդաշտդանի նրա թեկնածությունը: Այդ մասին երկուշաբթի օրը Մոսկվայի դետհամալսարանի ուսանողներին ու դասախոսներին հայտարարեց Պետական դումայում Ռուսաստանի ընտրություն խմբակցության դեկավար Եգոր Գայդարը: Նրա կարծիքով, «դրանք կլինեն դժվարին ընտրություններ, բայց Ելցինը բոլոր ժողովրդավար թեկնածուների մեջ ունի ամենամեծ հնարավորությունները»:

Գեներալ Լեբեդը չի հեռանա

ՍՈՍԿՎԱ, 17 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: 14-րդ բանակը շրջանի խաղաղության ու կայունության երաշխավորն է, հայտարարեց Մոլդովայում տեղաբաշխված ռուսական 14-րդ բանակի հրամանատար, գեներալ լեյտենանտ Ալեքսանդր Լեբեդը: Նրա հարցազրույցը երկուշաբթի օրը ցուցադրվեց Ռուսաստանի հեռուստատեսության «Ճշմարտության դահ» ծրագրով: «Բանակի դուրսբերումը դետք է սերտորեն շաղկապված լինի մերձդնեստրյան ճգնաժամի քաղաքական կարգավորման եւ այդ շրջանում խաղաղության ու կայունության երաշխիքների աղահովման հետ:

Հրամանատարը հեռացվեց

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ, 17 ՄԱՅԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչդես այսօր հայտնի դարձավ լավատեղյակ աղբյուրներից, Խաղաղօվկիանոսյան նավատորմի հրամանատար, ծովակալ Գեորգի Գուրինովը ազատվել է զբաղեցրած դաբեռնից: Ներկայումս նավատորմի հրամանատարի դատարակությունները կատարում է փոխծովակալ Իգոր Խմելնովը: Դիտորդների նշում են, որ ծովակալ Գուրինովի դաբեռնաթողությունը կապված է նավատորմի մարտավիճակի կտրուկ անկման հետ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատարակ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Պետության հարստացման եւս երկու ճանապարհ

Շատերիս համար անսովոր կարող է հնչել այն պնդումը, թե պետությունը հարստություն կարող է ստեղծել նաեւ դրսում, արտասահմանում: Ընդ որում, այդ հարստությունը կարող է ստեղծվել առանց պետության անմիջական մասնակցության: Այս գործընթացների վերաբերյալ իր իմացությամբ մեր ընթերցողների հետ համաձայնվեց զրուցել հարցին լավատեղյակ Շահե արքեպիսկոպոս Ագնիանը Երուսաղեմից:

- Հիմա բանկային տեսության մասնագետ չեմ, սակայն լավատեղյակ եմ այս հարցում հրեական փորձին, որով Իսրայելին հաջողվում է մեծ դրամագլուխներ ողողել երկրի զարգացմանը: Բազելում կայացած իրենց առաջին սիոնիստական ժողովից հետո, հրեաների ղեկավար Հերցելը հարց դրեց 1906 թվականին Լոնդոնում դրամատուն հիմնելու մասին: Մեկ ստերլինգ արժողությամբ բաժնետոմսեր բողարկելով շրջանառության մեջ, հրեաները 300 հազար ֆունտ ստեղինգ հավաքեցին, այդպիսով ստեղծելով արտասահմանում առաջին հրեական բանկը: Նոթատակը՝ Պաղեստինի տարածքում արաբներից հողեր գնելն էր, որոնք ոլորտային հրեաների առաջագա հայրենիքը:

1948-ին, երբ հրեաներն անկախություն հռչակեցին, այդ բանկը «Բանկ Լեումի Լե Իսրայել», աշխարհում մեծագույն դրամատներից մեկն էր: Այն ֆինանսավորում առաջարկեց նորաստեղծ պետության բոլոր ծրագրերի համար ճանապարհներ բանալու, Հայֆայի նավահանգիստը ընդարձակելու եւ ամենից առավել գյուղատնտեսություն զարգացնելու (դեռ չափազանց դեպ էր 1948-ին, ճիշտ ինչպես Հայաստանինը այսօր) ու ճարտարարվեստ ստեղծելու համար: Այս ամենն իրականացվեց զուտ տնտեսական, ֆինանսական օրենքների հիման վրա, այսինքն բարեգործություններ չեն արվել, նվիրատվություններ չեն եղել: Երբ պետությունը կամ որեւէ ընկերություն ծրագիր է մշակում ու դիմում այս դրամատանը, վերջինս ֆինանսավորում է առնում եւ հետո միայն ֆինանսավորում, ընդ որում, առավելագույնը՝ ներկայացվածների 75 տոկոսը:

Երկրաբաժից անմիջապես հետո, երբ անկախության հեռանկարը Հայաստանի համար տեսանելի էր արդեն, ես դիմեցի «Բանկ Լեումիի» այսօրվա նախագահին (որը նախկինում եղել է Իսրայելի ֆինանսների նախարարը), խորհուրդ խնդրելով Հայաստանի ղեկավարներին հաղորդելու համար: Ի դեպս նա ինձ տվեց իրենց բանկի ստեղծման դրամագլուխը նկարագրող մի գիրք եւ դրամատան տարեկան ֆինանսական տեղեկագիրը, ասելով, որ դրսում ստեղծվող դրամագլուխը ոչ թե պետական, այլ արտասահմանի հայերինը պետք է լինի: Այն պետք է դրվի այնպիսի դրամատան մեջ, որը շահույթ աղահովի դրամատերերին: Այդ սկզբունքով է գործում իրենց բանկը, ավանդատուներին վճարելով միջազգային ընդունված տոկոսադրույքներից ավելին:

Հրեաների օրինակով դրսում Հայաստանի բանկ ստեղծելու մտադրությամբ ես դիմեցի արտասահմանում բանկային գործի գիտակ մի քանի մարդկանց՝ Սարգիս Բեդոյանին, որն ֆինանսական բանկ ունի Փարիզում, Վահե Ջազմաղարյանին, որը «Քրեդի Սուիսի» Ֆրանսիայի բաժնի տնօրենն է, դրն. Գեւորգյանին, որը Ֆրանսիայում իտալական բանկի տնօրենն է, Ստեփան Ծատուրյանին՝ մեծ գործարար Վենեսուելայից: Երեք ժողով գումարեցինք Ֆրանսիայում եւ, որոշեցինք դրամատան անունը՝ «Արմենբանկ», դրամագլուխը՝ 200 մլն դոլար: Պարոնայք Ջազմաղարյանն ու Բեդոյանն այս հարցով հարաբերությունների մեջ մտան արտասահմանյան մեծ բանկերի հետ, որոնք խոստացան գնել մեր ստեղծվելիք բանկի արժեթղթերի 49 տոկոսը, որը նշանակում է, որ 51 տոկոսը կտարածվի արտասահմանի հայության մեջ, փոքր բանակցություններով, այնպես որ, ոչ մի ձեռքում վերահսկող փաթեթ չգոյանա: Կարծում եմ, որ դժվարություններ չեն լինի այս արժեքթղթերի իրացման գործում, եթե առաջարկվելիս նշվի, թե որտան է գնել, ասենք, «Բանկ դը Ֆրանսը» կամ «Քրեդի Սուիսը»: Եվ ինչպես «Բանկ Լեումի» դեպքում, պետի ստեղծվի մի վերին մարմին, որի արտոնությամբ միայն վարկեր հատկացվեն ձեռնարկումների համար: Իմ կարծիքով, այդ մարմնում պետք է լինեն Ալեք Մանուկյանի որդի Ռիչարդ Մանուկյանի, Քրիս Գրիգորյանի, Ստեփան Ծատուրյանի պես մարդիկ, որոնք անմիջական շահ չունենան բանկի մեջ, այլ միայն խորհրդատու լինեն:

Արտասահմանում հայկական դրամատան ստեղծումը կարող է պատճառ դառնալ, որ նոր անկախ հանրապետությունների շատ հարուստ հայեր վերջինիս հետ գործառնություններ կատարեն: Այդ բանկը կարող է դեղ հայաստան եկող ֆինանսների մի մեծ շտեմարան դառնալ, ողողել արտասահմանի դրամագլուխները Հայաստան: Իհարկե սա ժամանակ պահանջող գործընթաց է, որի համար կազմակերպություն պետք է ստեղծվի, մարդիկ պետք է լինեն, որ գնան տեսնվեն կարեւոր հայ անձնավորությունների հետ եւ կամաց-կամաց անհրաժեշտ խանդավառությունը ստեղծեն արտասահմանում:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այդպիսի դրամատունը կծախսվի, քանի որ դրամատերերը կվախենան իրենց կապիտալը դատերազմի մեջ ներքաշված, շրջափակված Հայաստանի դեմ անաղահով դեպքում ողողել: Սակայն սա թվացյալ է, քանզի ամեն դիմորի վաճառական լինելուց եւ սկսի հող մշակել, որվհետեւ միայն հող մշակողն է դատրաս իր կյանքը գոհել այդ հողի համար: Կարծում եմ, որ այս առումով մենք ավելի բախտավոր ենք, որվհետեւ Հայաստանում ունենք ճարտարարվեստ, արտադրության միջոցներ, որակյալ բանվորներ եւ մեր դեպքում խնդիրը միայն վերակազմակերպելն է, որը չի լինի, եթե չլինի ֆինանսավորում:

Արտասահմանում ազգային բանկի դրամատունը դրամ չի տա, նույնիսկ եթե այդ դիմողը կառավարությունն է: Կֆինանսավորվեն միայն

շահույթ խոստացող ձեռնարկները: Եվ խիստ կլինի վերաբերմունքը ֆինանսավորման դիմաց ունեցողների հանդեպ, քանի դեռ Հայաստանի որոշ ճյուղեր չեն սմրացել եւ հանրապետությունում արտասահմանյան բանկերի հետ հարաբերվելու որոշ երեւույթներ չեն ընդունվել: Այստեղ մեծքերեմ դարձյալ Իսրայելի փորձից: Երբ 1948-ին Բեն Գուրիոնին հարցրին, թե այս խեղճկուկակ երկրի մեջ (Իսրայել) ինչպես պետք է պետություն ստեղծեք, երբ բոլոր արաբական երկրները բոյկոտի են ենթարկել ձեզ, արգելվել է նույնիսկ որեւէ օտար երկրի ասեւատար անել ձեզ հետ, նա պատասխանեց, որ որդեզի երկիր կառուցի, հրեան պետք է դարձնի ինքնաբավ: Ինչպես գիտենք, Իսրայելը ոչ միայն հրեաներն են, այլեւ մեծ բանկերը, «Ջեներալ մոտորը», «Ֆորդը» եւ այլն:

Բանկերի վաճառքից գոյացած գումարներից պետական մեծ ծրագրեր են ֆինանսավորվում (նույնիսկ զենք է գնվում Իսրայելի համար): Օրինակ, 1952-ին այդ փողերն ողողվեցին Մեռյալ ծովի հիմնական հումքի շահագործման նպատակին, 1953-ին Նեգեվի անապատի միջով ճանապարհ բացելուն, 1957-ին Հայֆայում նավթատար խողովակներ բացելուն, 1985-ին նոր 1400 մգվտ հզորությամբ էլեկտրակայանի կառուցմանը, 1990-ից սկսած երկու տարի՝ նախկին Խորհրդային Միությունից Իսրայել ներգաղթածների համար բնակարաններ, աշխատատեղեր, գործարաններ եւ այլն հիմնելու համար:

Եզրափակելով, երկու խոսք կուզեմ ասել նաեւ մեր մտածողության մասին: Այն, ցավոք, արտասահմանը դիտում է լոկ իբրեւ նվիրատու: Սակայն նվիրատվությամբ պետության չես կառուցի, գումարներն այն չեն, եւ նվիրատուն էլ մշտական չէ: Իսկ նշված ծրագրերով խոշոր դրամագլուխներ ներգրավելուն զուգահեռ նվիրատվությունն իրոք կարող է ծառայել խոշոր ծրագրերի ֆինանսավորման գործին: Ես չեմ կարող համեմատել Հայաստանի եւ Իսրայելի ներկայիս կացությունները: Սակայն կարելի է համեմատել այսօրվա Հայաստանը 1950-ականների Իսրայելի հետ, երբ վերջինս չուներ գյուղատնտեսություն, ճարտարարվեստ, նույնիսկ կարգին էլեկտրակայան չուներ, եւ գրեթե ամեն ինչ ներմուծում էր: Սակայն 1954-ից այն կարողացավ բավարար սնունդ արտադրել: 1960-ից սկսեց արտահանել: Եվ սա հրաշք չէ: Մենք ես կառավարությունից հրաշքներ չպետք է սպասենք, քանզի մտեսական, բաղաքական կյանքում հրաշքներ չեն լինում: Այստեղ միայն կազմակերպված աշխատանք է եւ նոյասավոր առիթների օգտագործում: Իսկ մեր ամենաթույլ կողմն այն է, որ մենք տակավին չենք կարողանում արտասահմանը կազմակերպել: Ընդհանուր շահ՝ Հայաստանի բարգավաճումը թերեւս ավելի շատ բաժանում է իրարից կուսակցություններին, միություններին, եկեղեցուն եւ այլն, բան միավորում, քանզի այդ շահի մեջ յուրաքանչյուրը փնտրում է իր նեղ շահը:

Մեր արտասահմանը կազմված է շատ հայրենասեր տարերից, որոնք մեծամասնություն են: Սակայն սփյուռքահայերը տակավին վարժված չեն մտածել, որ իրենց դրամատնությունն է օգնել Հայաստանին: Այդ ոգին պետք է ստեղծել:

Գրի առավ

ՄԱՐԳԱՐ ՄԵԼԵՔՅԱՆԸ

ԱՐՁԱԳԱՆՔ

Ո՞վ է խառնաշփոթի իսկական հերոսը

Գույնը քայլելու իրավունքը միայն Խալամի սիրուհուն չի վերադարձվում: Եվ միայն բարեհաջողության համար չէ, որ լուսադողից դպահանջվում է հեռեալ իր քայլերին:

Մեր թերթում մայիսի 13-ին հրապարակված նամակն ահազանգում էր երեխաներին բաշանում են Երեւանում: Խմբագրությունը նամակն իր էջերում զետեղելուց առաջ զգուշացրել էր, որ այն ստուգված չէ եւ հույս հայտնել, թե տպագրվելուց հետո համապատասխան հաստատություններն իրենք կարձագանքեն նկարագրված մերժելի դեպքերին:

Արձագանքը չուշացավ: Գորիսի Շինուհայր գյուղից Լիդա Գեւորգյանի նամակը վրդովել էր (մեղմ ասած) Երեւանի խուլ ու համր երեխաների գիշերօթիկ դպրոցի դայակ Զուբեյդա Մելիյանին, նրա ամուսնուն, դպրոցի մանկավարժ Գնունի Մուրիջանյանին, նախկին պահակ Սերգոյանին:

Բանն այն է, որ 1994 թ. փետրվարի 18-ին Հոլանդիայից Երեւան վերադարձան զոհված ազատամարտիկների երեխաները, եւ նրանց մի մասին օդակայանում չդիմավորեցին: Այս առիթով ՀՀ լուսավորության նախարարության արտաքին հարաբերությունների վարչության պետ Գեղամ Սարգսյանը հաղորդեց, որ վերադարձի օրվա մասին տեղյակ են եղել բոլոր մեկնածների հարազատները: Լուսնախարարությունը նրանց տեղավորելու եւ Երեւանում երկու օր պահելու համար արել է ավելին, քան պարտավոր էր: Գորիսի շրջժողկոմբաժնի վարիչ Հրանտ Սոնյանը երեխաներին հենց նույն օրը չդիմավորելու փաստը պատճառաբանում է ավտոճանապարհային իրավիճակով. «Սիսիանի խայմերուկում ավտոճանապարհային ոստիկանությունը մեր մեքենան ետ ուղարկեց: Բայց ես, երբ դեռ երեխաները Երեւան չէին հասել, ելույթ ունեցա տեղական հեռուստատեսությամբ, խնդրեցի Երեւանում բնակվող հարազատ ու բարեկամին դիմել՝ երեխաներին դիմավորելու համար»: Գորիսի շրջանից ուր եւ Ղարաբաղից չորս երեխայի դիմավորում է նախարարության նույն վարչության առաջին կարգի մասնագետ Տիգրան Սահակյանը. «Երջանիկ պատահականությամբ այդ օրը դեռ նախարարությունում էի, Գորիսից զանգահարել էին փոխնախարար Վլ. Սահակյանին եւ տեղեկացրել, որ դիմավորել չեն կարող երեխաներին»: Այնուհետեւ Սահակյանը երեխաներին տեղավորում է Երեւանի խուլ ու համրերի գիշերօթիկ դպրոցում եւ դպրոցի դայակ Զուբեյդա Մելիյանին խնդրում հոգ տանել նրանց համար: Ղարաբաղցի երկու երեխայի որդն. Սահակյանն իրենց տուն է տանում: Երկու օր անց Գորիսի շրջժողկոմբաժնի վարիչը երեխաներին տեղափոխում է Գորիս: Տանն արդեն երեխաները պարզում են, որ ծամոտուկներից բացակայում են Հոլանդիայից բերած նվերները:

Տիկին Զուբեյդա Մելիյանը (երկու երեխաների մայր) չափազանց դառնացած է: Չնայած որեւէ խմբագրական ոստիկանական չէ, եւ գողին գտնելու որեւէ պարտականություն ու նպատակ չունի, սակայն հետեւելով բեկուզ միայն անմեղության կանխավարկածին, որոշեցինք անպատասխան չթողնել տիկնոջ հերոմները: Ի դեպ, այս առիթով Երեւանի ՆԳ Մյասնիկյանի բաժնում, ըստ որն. Սոնյանի դիմումի, հարուցված է քրեական գործ: Չնայած հետաքննությունը շարունակվում է, սակայն շրջանի ՆԳ բաժնի պետ գնդապետ Խաչատյանը հայտնեց, որ նախնական քննությունից համոզվեցինք պարզ է, որ խաղաղուհի Զուբեյդա Մելիյանն առնչություն չի ունեցել երեխաների ծամոտուկների հետ:

Տիկին Զուբեյդան ապրում է դպրոցի հանրակացարանային հարկաբաժնում: Տիրապետում է խուլ ու համրերի հետ հաղորդակցվելու եւ բարգմանելու միջոցներին:

«...Ծամոտուկները տեղավորել էին տնօրենի սենյակում, եւ ոչ իմ «ցուցումով», ասում է նա, իրոք, մի քանի հարկ վեր բարձրացնելը դժվար գործ էր, իսկ տնօրենի սենյակը նաեւ ազդանշանի համակարգ ունի: Ծամոտուկները տեղավորելուց հետո դպրոցի պահեստապետը փակել է դուռը եւ բանալին հանձնել դպրոցի ննջարանային մասի՝ այժմ արդեն նախկին պահակին: Հաջորդ օրը երեխաները ծամոտուկներից ինչ ինչ փոխնորդներ ուզեցին վերցնել, դիմեցի, պահակը մերժեց, ասելով, որ իրեն պատվիրված է մինչեւ երեխաների մեկնելը բանալին ոչ մեկի չտալ: Ինչ վերաբերում է երեխաներին, նրանց ընդունեցինք, ինչպես հարկն է: Հոսանք չկար, աղբիկները չէին ուզում տղաների հետ նույն սենյակում ննջել, բարձրացի իմ սենյակը: Երեխաների վզերից իրենց դոլլարներն էին կախված, դեռ մի երկուսն էլ տվեցին ինձ՝ այդ երկու օրը պահելու եւ վերադարձնելու: Եթե որեւէ բան յուրացնելու լինեի, հենց դրանք չէի վերադարձնի»:

Նույնը հաստատեցին նաեւ դպրոցի մանկավարժ Գնունի Մուրիջանյանը եւ նախկին պահակ Սերգոյանը: Վերջինս ավելացրեց՝ եթե այդ ընթացքում տնօրենի առանձնասենյակի դուռը բացվեր, մասնաբենի պահակն անպայման կլսեր ձայնային ազդանշանները: Իսկ Տիգրան Սահակյանը հայտնեց, որ երեխաները ծամոտուկները վերցնելիս ստուգում էին «սոչ» ժամավեճ սոսնձով ամրացված փականները, եւ նրանցից որեւէ մեկը չթողնեց. «Ինչ վերաբերում է տիկին Զուբեյդային, նա նոր մայր մարդու, մոր տպավորություն թողեց, որն ի վիճակի եղավ ընդունելու զոհվածների երեխաներին, երկու օր հոգ տանելու նրանց համար, իր 12 քառակուսի մետրանոց սենյակում այդման երեխա տեղավորելու... Միայն շնորհակալության է արժանի»:

Ի դեպ, որն. Սահակյանը պնդում է, որ իր տանը հյուրընկալված դարաբաղցի երկու երեխաների ծամոտուկներից (այդ ծամոտուկները եւս դպրոցի տնօրենի սենյակում են եղել) որեւէ բան չի անհետացել: Մինչդեռ որն. Սոնյանը հեռախոսազրույցում հայտնեց, որ դարաբաղցի երեխաները եւս բողոքում էին՝ նվերները չկան:

«... Երեխաներիս դպրոցում ծաղրում են, ծանոթ բարեկամ ու հարազատ իրար են խառնվել... Չեմ կարողանում նայել երեխաներիս այրերին: Վերադարձիր ինձ ու ընտանիքս իմ մասնաբանը», ասում է տիկին Զուբեյդան:

Իրոք, դժվար կացություն է. ոչ ոք իրավունք չունի մեղադրելու այս տիկնոջը՝ իր շրջապատում եւ հասարակության մեջ նրա դիրքի հարցն է դրված: Այս կողմից, երեխաները բանվել են... Իրավապահ մարմինները պետք է շտապեն:

ՈՒՐԲԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Նախագահը այս անգամ ջերմ չէր նայում Բոսնիա-Հերցեգովինայում ուժի օգտագործմանը. նույնիսկ սերբերի մոտ դասանդ վերցված Ռ ֆրանսիացիների փրկելու օգտին: «Դա լուծում չի բերի, ասաց նա, դրա-

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսուա Միտերան. Սա վա՞, սա վա, սա վա...

ՐԱՖՖԻ ՀԵՐՄԱՆ ԱՐԱԲՍ

Լրացավ Ֆրանսիայի հանրապետության նախագահ Ֆրանսուա Միտերանի նախագահության 13-րդ տարին: 1981 թ. մայիսի 10-ին, Փարիզի Բաստիլ հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր մարդիկ տնում Լին հաղթանակը անընդհատ բացականչելով Mitterand-Changement (Միտերան՝ փոփոխություն) կարգախոսը: Նախագահական ընտրություններին սոցիալիստական կուսակցության թեկնածու, որը նաև նախագահն էր այս կուսակցության, իրավաբան Ֆրանսուա Միտերանը, հավաքելով ձայների 51 տոկոսը, հաղթել էր UDF կուսակցության թեկնածու, այդ ժամանակվա Ֆրանսիայի նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենին (ձայների 49 տոկոս): Այսպիսով, Ֆրանսիայում սոցիալիստական կուսակցությունը ճիշտ 25 տարի ընդմիջումից հետո գալիս էր կառավարելու: Մայիսի 10-ին, իր նախագահության 13-րդ տարում, 77-ամյա Ֆրանսուա Միտերանը, TF-1 եւ FRANCE-2 հեռուստակայանների միջոցով դասասխանեց լրագրողներ Պասքիկ Պուավր դ'Արվորի (TF-1) եւ Պոլ Ամարի (Fr-2) հարցերին: Ահավասիկ ընտրողաբար մի քանի դասասխաններ միջազգային անցուդարձերի վերաբերյալ Միտերանի արտահայտած կարծիքներից:

նակ թեմեր իրենց կյանքը կարող են վտանգի ենթարկել: Բանակցություններ վարելը մնում է որոնս լավագույն միջոց»: «Ռուսաստանը, ԱՄՆ-ը եւ Եվրոպական միությունը կարեւոր կողմեր են միջազգային ասպարեզում Բոսնիայի համար: Անհրաժեշտ է, որպեսզի այս 3 կողմերը համաձայնության գան: Իհարկե, ոչ մի արդյունք ձեռք չբերելու դեպքում Ֆրանսիան հնարավոր է, որ հայտնի իր մահոգությունը տեղում գտնվող ֆրանսիացի զինվորների աղահովության վերաբերյալ», ասաց նա:

Միտերանը ոնեղեց, թե Ֆրանսիան չի վերսկսելու միջուկային փորձերը: Նա ասաց, թե Մեծ Բրիտանիայի վարչապետ Մեյջորից, ԱՄՆ-ի նախագահ Քլինթոնից եւ Ռուսաստանի նախագահ Ելցինից հավանություն է ստացել այս կարգակցությամբ: «Սա կառավարության եւ իմ միջեւ գոյություն ունեցող անհամաձայնություններից մեկն է», ավելացրեց Միտերանը:

Առա մի հարցումի, թե՝ «12 անդամ երկրներով Եվրոպական միությունում արդեն մշտական համաձայնություն չկա, 16 անդամ երկրներով նոր Եվրոպայում բարդությունները չե՞ն ավելանա», Միտերանը ծիծաղելով դասասխանեց. «10, 6 կամ նույնիսկ 2 երկրով Եվրոպայում մշտական համաձայնություն չեմ ունենա: Չդեմ է վախենալ անհամաձայնություններից: Եվրոպական միության սկզբունքային հիմունքների ծագելիք այս կամ այն անհամաձայնությունները կարելի է հարթել», ավելացնելով, թե Եվրոպայի միության գաղափարը



իմքին շատ ուժեղ է սակայն նրա դեմ զորավոր քարոզչություն է արվում, իսկ հոգուս գրեթե ոչինչ:

Իտալիայի նոր վարչապետ Բերլուսկոնիի հիմնած կառավարությունում նեոֆաշիստ 5 նախարարների նշանակման կապակցությամբ Ֆրանսիայի Հանրապետության նախագահն ասաց, թե հարկավոր է բարեկամաբար խոսել իտալացիների հետ: Համենայնդեպս, ասաց նա, սակայն իմ կարծիքը կհայտնեմ ընտրությունների երկրորդ շրջանին:

Մի հարցումի դասասխանելիս, Ֆրանսիայի նախագահը հիշեց իր գերմանացի դաշտոնակցին, որը քաղաքականությունից հետո ասել էր. «Ես արեցի այն, ինչ կարողացա», իսկ ինքն էլ ավելացրեց. «Ես արեցի այն, ինչին հավատացի»: Երբ լրագրողները հարցրեցին, թե հետեւելով Շառլ դը Գոլի անվան օդակայանի, Ժորժ Պոմպիդուի անվան մշակութային կենտրոնի օրինակներին, Ֆրանսուա Միտերանը ո՞ր կառույցի անվանումը կցանկանար իր անունով, նա դասասխանեց. «Համենայնդեպս, չէի ցանկանա, որ անունս տվեր որեւէ գնճի: Ես շատ հոյաս եմ Լուվրով, հույս ունեմ, որ հոյաս կլինեմ մեծ գաղարանով. նաեւ Լա Մանշի բանելով, սակայն որեւէ բան չեմ դաֆնանցում»:

Մեկ ժամ տեւած զրույցի ավարտին «Չկարծեմ, որ մոռացանք, ինչդե՞ս եմ, դարոն նախագահ» հարցին, նա դասասխանեց. «Ֆրանսիացիները սովորություն ունեն իրար հարցնել. Սա վա՞ եւ նաեւ սովորություն ունեն դասասխան ստանալ. սա վա-սա վա, հիմա ես էլ եմ ասում. սա վա»:

ՏԱՍՐԱՌՆ

Երկրագունդը բոլորին կկերակրի՞

ՎԻԵՆՆԱ, 16 ՄԱՅԻՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Առ 2025 թ. մեր մոլորակի բնակչության ընդհանուր թիվը պետք է հասնի 8,5 միլիարդ մարդու: Արդյոք երկրագնդի վրա ստեղծվում կլինե՞ն այնպիսի դայմաններ, որոնք անհրաժեշտ են բոլոր աշխարհամասերի մարդկանց սննդամթերքով ապահովելու, բնությունը եւ բնապատարները դասդանելու համար: Այս հարցի դասասխանը փորձել են գտնել ՄԱԿ-ի հանրահայտ փորձագետները այսօր Հռոմում ավարտված միջազգային խորհրդաժողովի մասնակցները: Դրանց եզրայրներում տրվեց վերջին տասնամյակների ընթացքում ծննդաբերության աճի հետ կապված ժողովրդագրական խոշոր փոփոխման լայն դատկերը: Հենց ընթացիկ դարի վերջին եւ հաջորդ դարի սկզբին, նրանց կարծիքով, երկրագնդի բնակչությունը տարեկան կավելանա 100 միլիոնով, ընդ որում, աճող ծննդաբերության հիմնական կենտրոնները կշարունակեն մնալ Ասիան եւ Աֆրիկան: Ներկայումս երկրագնդի բոլոր բնակիչների 60 տոկոսը ապրում է Ասիայում, որտեղ վերջին ժամանակներս հետզհետե ավելի դարգոռջ է զգացել տալիս դարենի դակասը: Միեւնույն ժամանակ զարգացած արդյունաբերական դետությունները շարունակում են տնօրինել բարձր կարդությունների սննդամթերքի արտադրության տեսակետից: Բացի այդ էլ, վերջին տասը տարում դարենի հիմնական արտադրությունը ավելացել է 24 տոկոսով, այն դեպքում, երբ երկրագնդի բնակչության թիվը աճել է ընդամենը 20 տոկոսով: Համաձայն ՄԱԿ-ի տվյալների, դարենի արտադրությունը դարձյալ դանդաղ է զարգացել: Ասիայում, Լատինական Ամերիկայում եւ Աֆրիկայում դարենի արտադրությունը աճել է 1990-ականներին 30 տոկոսով, Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում եւ Խորհրդային Միությունում՝ 10 տոկոսով: Ասիայում դարենի արտադրությունը 1990-ականներին աճեցին նաեւ մի քանի լավատեսական հայտարարություններ: Այդդես, Բեռլինի համալսարանի դրոֆեսոր Ինգրիդ Շոլիյերը այն կարծիքին է, որ մեր մոլորակն ընդհանրապես խոշոր դաշարներ ունի, որոնք ի վիճակի են բնակչությանն սնունդ ապահովել անգամ 30 միլիարդ բնակիչների համար: ■

Տիեզերական բիզնես

ՏՈԿԻՈ, 16 ՄԱՅԻՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ասահի» թերթն այսօր գրել է. «Չինաստանում հաջողվեց լուրջ ձեռքում իրականացնել տիեզերական օբյեկտների արձակման առեւտրական ուղղությամբ մրցակցային կոշտ դայքարի շնորհիվ: Չինաստանի գիտության ու տեխնիկայի կոմիտեի հաղորդման համաձայն, Պեկինը մի շարք համաձայնագրեր է կնքել մինչեւ 2000 թ. ընկած ժամանակամիջոցում 30 արհեստական արբանյակ արձակելու համար: Տիեզերական բիզնեսի գծով ՉԺՀ-ի համագործակիցներ են դարձել գլխավորապես ԱՄՆ-ի եւ այլ երկրների ընկերություններ, որոնց գրավել էին տիեզերական օբյեկտների արձակման առաջարկված ցածր գները:

Արժեզրկումը մոտ է զրոյին

ՀԵԼՍԻՆԿԻ, 17 ՄԱՅԻՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆինլանդիան տակավին մնում է արժեզրկման ամենացածր մակարդակն ունեցող երկիրը Եվրոպայում: Մեկ տարվա ընթացքում այստեղ սպառողական գները աճել են տոկոսի 0,2 տոկոսով: Գների նույնդիսի աճ է գրանցված վերջին երկու ամսում (մարտ-ապրիլ): Այդ մասին այսօր հաղորդել է Ֆինլանդիայի կենտրոնական վիճակագրական բյուրոն: Եվրոպայի մնացած երկրներում արժեզրկման մակարդակը մարտին միջին հաշվով կազմել էր 3,2 տոկոս: Ֆինլանդիայում արդյունաբերական արտադրության ծավալը մարտին 8,5 տոկոսով ավելին էր, քան մեկ տարի առաջ նույն ամսին: Փետրվարից մինչեւ մարտ այն աճել էր 0,1 տոկոսով:

ԱԱԱ
Կոոմերատիվ

Կոոպերատիվը առաջարկում է՝
պեմզաբլոկ եւ միջնապատային
սալիկներ բոլորի համար
Տեղափոխումը ցանկացած հասցեով:
Պատվերները ընդունվում են

57-00-85
57-04-29
63-79-38
48-95-31

A STYLE 58.18.41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Անգլերեն դասավանդում, որոնս երկրորդ լեզու
մեկ տարվա ծրագիր ավարտական վկայագրի շնորհումով

Դիմորդները պետք է ունենան համապատասխան բարձրագույն կրթություն՝ անգլերեն, ժամանակակից լեզուներ կամ լեզվաբանություն: Երկու տարվա մանկավարժական փորձը ցանկալի է:
ՀԱՀ ընդունվելու համար անհրաժեշտ է, որ ընդհանուր գնահատականների միջին ցուցանիշը լինի 4.0 եւ բարձր:
Դիմորդները պետք է լավ տիրապետեն անգլերենին, ունենան TOEFL քննության 575 կամ բարձր միավորներ կամ մասնակցեն ՀԱՀ-ում մայիսի 28-ին կազմակերպվող անգլերեն լեզվի քննությանը:

Դիմորդները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.
1. Դիմում
2. Ֆինանսական տեղեկություններ
3. Դիպլոմ եւ ներդիր
4. Երեք երաշխավորագիր նամակ

Ծրագրի տեւողությունը երեք քառորդ է: Այն կսկսվի 1994 թ. սեպտեմբերին:
Կանխավճարը դրամով կազմում է 2 ԱՄՆ դոլարի համարժեք գումար, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: Փաստաթղթերի հանձնման վերջին ժամկետը մայիսի 27-ն է:
Դիմորդները, որոնք չունեն 575 կամ բարձր միավորներ TOEFL քննությունից, կմասնակցեն մայիսի 28-ին ՀԱՀ-ում կազմակերպվող քննությանը:
Դիմումների ձեւերը կարելի է ստանալ ՀԱՀ-ում գրանցման բաժնից: Հասցե՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, ՀԱՀ, 1 հարկ, 19 սենյակ, հեռ. 27-10-85:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
ծրագրի ավարտական վկայագրի շնորհումով

ՀԱՀ-ն նախաձեռնում է «Հասարակական առողջապահություն» մեկ տարվա ծրագիր, որի վերջում կտրվի վկայագիր: Ծրագրի նպատակն է համապատասխան կրթությամբ մասնագետներին դատրաստել հասարակական առողջապահության ոլորտում աշխատելու համար: Առանձնահատուկ ուշադրություն կտրվի առողջապահության հիմնական գիտությունների ծրագրավորում, գնահատում, կառավարում, կապի միջոցներ, համաձարակաբանություն եւ դեկավարում, ուսումնասիրությանը: Դիմորդները պետք է լինեն բժշկական (ատամնաբուժական բաժինը ներառյալ) եւ անասնաբուժական ինստիտուտների շրջանավարտներ, ինչդես նաեւ ճարտարագիտական, բնագիտական, հասարակագիտական կամ այլ հարակից մասնագիտությունների բարձրագույն կրթություն ունեցող անձինք: Անհրաժեշտ է նաեւ առողջապահության կառավարման կամ հասարակական առողջապահական ծառայության բնագավառում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ:

ՀԱՀ ընդունվելու համար անհրաժեշտ է, որ ընդհանուր գնահատականների միջին ցուցանիշը լինի 4.0 եւ բարձր, ինչդես նաեւ TOEFL քննությունից հավաքել 550 միավոր կամ ՀԱՀ-ում մայիսի 28-ին կազմակերպվող անգլերեն լեզվի քննությունից ստանալ բավարար գնահատական: Անհրաժեշտ է ստանալ բավարար գնահատական նաեւ յուրաքանչյուր դեկտեմբերին ՀԱՀ-ում կազմակերպվելիք GRE քննությունից: Այն անձանց համար, ովքեր բավականաչափ չեն տիրապետում անգլերեն լեզվին, 1994 թ. աշնանը ՀԱՀ-ում կկազմակերպվեն դասընթացներ:
1995 թվ. գարնան եւ աշնան ընթացքում ուսանողները կունկնդրեն հետեւյալ դասընթացները. առողջապահության վարում եւ կառավարում, կենսավիճակագրություն, համաճարակաբանություն եւ վարքագծային գիտություններ:
Դիմորդների վերջնական ընտրությունը կկատարվի 1995 թ. փետրվար ամսին: Ընդունված ուսանողների թիվը չի գերազանցի 20 հոգուց:
Դիմումների ընդունման վերջին ժամկետը սույն թվականի մայիսի 27-ն է: Դիմումների ձեւերը կարելի է ստանալ ՀԱՀ-ի գրանցման բաժնից: Հասցե՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 1 հարկ, հեռ. 27-10-85:
Հիշեցնում ենք, որ ընդունելությունը Գործարար Դեկավարում, ճարտարագիտություն, Բաղաքագիտություն բաժինները եւ «Անգլերենի դասավանդում, որոնս երկրորդ լեզու» նոր բացված ծրագիրը շարունակվում է մինչեւ մայիսի 27-ը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Այսօր թանգարանների միջազգային օրն է

«Թանգարաններին ջերմություն է պետք»

ՄԱՐՏԻՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ,
Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն

Ինչ է թանգարանը: Թերևս, ոգեղեղանողական մի համակարգ, որը անընդհատ փոփոխություններ է կրում: Միշտ կլինի Մարինեսիի նման մի հեղափոխական, որը կուզենա այրել թանգարանը, կլինի նաև Ժան-Պոլ Մարսելին հետևող մեկը, որը կասի. «Ինձ համար մարդկային կյանքն ավելի թանկ է, քան Շարբի տաճարը»: Բայց մարդկությունը ոչիչ ոգեղանի չի՝ ոգեղանի չի՝ հուշարձաններ, մարդու հին ու նոր ստեղծագործություններ: Այդ ամենը ոչիչ ոգեղանի, գոյացյալի թանգարանների մեջ, թանգարանների հարկի տակ:

Հիմա Հայաստանի թանգարանները դատարկ են: այցելուները երևում են միայն ցուցահանդեսների բացման, հեսագա օրերին նրանց քանակը նվազում է:

Անշուշտ, թանգարաններին մարդկային ջերմություն, շնչում է պետք, բայց դատարկության, լռության ոգեղանությամբ թանգարանների հնայրը, գեղեցկությունը, բովանդակությունը չի խանգարվում. ձգողական ուժը չի դադարում: Այդ դատարկության մասին սվերն ընկնում է մարդկային կյանքի վրա, այդ լռությամբ ադիտանում է մարդու կյանքը:

Հայաստանի ոգեղանության թանգարանները դատարկ են. այցելուները երևում են միայն ցուցահանդեսների բացման, հետագա օրերին նրանց քանակը նվազում է:

Անշուշտ, թանգարաններին մարդկային ջերմություն, շնչում է պետք, բայց դատարկության, լռության ոգեղանությամբ թանգարանների հնայրը, գեղեցկությունը, բովանդակությունը չի խանգարվում. ձգողական ուժը չի դադարում: Այդ դատարկության մասին սվերն ընկնում է մարդկային կյանքի վրա, այդ լռությամբ ադիտանում է մարդու կյանքը:

Հայաստանի ոգեղանության

ՖՐԱՆՍԻԱ

Բարեգործական հանդիպում ի նպաստ հայ որբերի

ԱՍՏԱԲՈՒ ԲՈՅԱՋՅԱՆ
Փարիզ

Մայիսի 22-ին Թուլոնի համանուն քիմը, որտեղ հանդես է գալիս հայազգի հանրահայտ ֆուտբոլիստ, Ֆրանսիայի հավաքականի եւ Մարսելի «Օլիմպիկի» նախկին խաղացող Բեռնար Պադրոն եւ որի նախագահը մեր հայրենակիցն է, բարեգործական հանդիպում է անց-

Կենտրոնում Աշոտ Խաչատրյանն է

կացնելու Ֆրանսահայ ֆուտբոլիստներից կազմված հավաքականի հետ: Աղդեն իրենց համաձայնությունն են տվել այդ խաղին մասնակցել այնպիսի անվանի ֆուտբոլիստներ, ինչպիսիք են Ֆրանսիայի առաջին դիվիզիոնի խաղացողներ Միշել Տեր-Զաքարյանը, Էրիկ Ասատուրյանը, Ալեն Պոդոսյանը, Ժիլ Համբարձումյանը, Պասկալ Պետրոսյանը եւ ուրիշներ: Հանդիպման հասույթը կհատկացվի Հայաստանի որբ երեխաներին: Բացառված չէ, որ բարեգործական այդ հանդիպումը մասնակցի նաեւ Երեւանի «Արարատի» նախկին ավագ Աշոտ Խաչատրյանը: Ընդ որում, բոլոր ֆուտբոլիստները մրցավայր պետք է ժամանեն իրենց հաշվին:

Բարեգործական նման մեկ հանդիպում օրերս արդեն տեղի է ունեցել Փարիզի «Պարկ դ՝ Պրենս» հանրահայտ մարզադաշտում: Մոտ անցյալի Ֆրանսիայի անվանի ֆուտբոլիստներից կազմված «Վարիեստե» քիմն ուժեր չափեց Փարիզի եւ Փարիզի արվարձանների քիմերում հանդես եկող հայազգի ֆուտբոլիստներից կազմված հավաքականի հետ, որի ավագն էր Աշոտ Խաչատրյանը: 4-0 հաշվով հաղթեց «Վարիեստեն»: Հանդիպումից հետո ասուլիսի ընթացքում հրապարակվեց Բրազիլիայի ազգային հավաքականին եւ Ֆրանսիայի չեմպիոն «Պարի սեն Ժերմենին»: Այս հետաքրքիր հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի 1-1: Ուշագրավ միջոցառմանը ներկա էին մեծ թվով հանդիսականներ:

Տեր-Զաքարյանը 27-րդ տեղում

Ֆրանսիայի 1-ին դիվիզիոնի ներկայիս խաղացողներից «Մոնպելյեի» ավագ Միշել Տեր-Զաքարյանը առաջնությունում անցկացրած հանդիպումների քանակով (306 խաղ) գրավում է 27-րդ տեղը: 1-ին տեղում է «Մոնակոյի» դարպասապահ Էտորին, որի հաշվում գրանցված է 595 խաղ:

Զորկաեֆը սիրում է հայկական ճաշերը

Ֆրանսիայի հավաքականի եւ «Մոնակոյի» խաղացող Ֆրանսիայի ընթացիկ առաջնության գլխավոր ռմբարկու Յուրի Զորկաեֆը «Էկիպ» թերթին տված հարցազրույցում հայտարարում է, որ ավելի շատ սիրում է հայկական խոհանոցը եւ իր մոր պատրաստած ճաշերը:

Առանց MicKey-ի եւ Donald-ի

Ֆուտբոլի աշխարհի 15-րդ առաջնության բացման հանդիսավոր արարողությունից, որը նշանակված է Չիկագոյում, տեղի կունենա առանց MicKey-ի եւ Donald-ի: Walt Disney ընկերությունը հրաժարվել հանձնաժողովության գալ աշխարհի առաջնության կազմակերպիչ կոմիտեի հետ:

1995-ի առաջնությունը Նիգերիայում

Ֆուտբոլի աշխարհի երիտասարդական հերթական առաջնությունը 1995 թ. հունիսի 11-26-ը անցկացվելու է Նիգերիայում: Խաղերը հետաքրքիր է տեղի ունենան մի շարք քաղաքներում: ՖԻՖԱ-ն զգուշացրել է աֆրիկյան այս երկրի ֆուտբոլի ֆեդերացիային, որ կազմակերպական գործերը կատարվեն ամբողջությամբ եւ ժամանակին:

Միայն արդյունքներ

Վոլեյբոլի կանանց ՀՀ առաջնություն.

«Քոլեջ» (Սիսիան) - «Օազիս» (էջ միածնի շրջան)՝	0-3
«Վան» (Երեւան) - Բժշկական ուսումնարան (Երեւան)՝	3-0
«Օազիս» - Բժշկ. ուսումն.՝	3-0
«Քոլեջ» - «Վան»՝	0-3
Բժշկ. ուսումն. - «Քոլեջ»՝	3-2
«Վան» «Օազիս»՝	2-3

ԱՍՏՂԵՐԻ ՈՒՂԻՆ

Առասպելի մահը

Սենան աշխարհից հեռացավ 300 կմ/ժ արագությամբ

Ֆրանսիայի մեր թղթակից Գրիգոր Ամիրզայանը «Ֆորմուլա-1-ը» վտանգավոր չէ» վերնագրով հոդված էր պատրաստել ուղարկելու խմբագրությանը, ուր ասվում էր. «Ֆորմուլա-1-ն» անցյալում ամենավտանգավոր մարզաձեւերից մեկն էր, որը տասնյակ չեմպիոնների կյանք էր խլում: Բայց գիտության զարգացումը եւ մեքենաների կատարելագործումն այս մարզաձեւը դարձրել են անվտանգ: Վերջերս Սան-Մարինոյի «Մեծ մրցանակի» խաղարկության փորձերի ժամանակ բրազիլացի Ռուբենս Բարիկելլոն «Ֆորդան» տիպի մեքենայով 280 կմ/ժ արագությամբ մի շրջադարձի ժամանակ, կորցնելով հավասարակշռությունը, մարզադաշտից դուրս նետվեց: Մեքենան ուժգնորեն բախվեց մարզադաշտի շուրջը գտնվող եւ անիվներից պատրաստված պատին: Բարիկելլոն այս մեծ արկածից փրկվեց միայն քթի ոսկորի ջարդվածքով, ինչը շատ թեթեւ վնասվածք է նման արագությամբ վթարի համար: Անցյալներում, նույնիսկ 120 կմ/ժ արագությամբ վթարների դեպքում, մահացու եւ էին արձանագրվում: Հիմա վարորդի խցիկը ֆիբրներից է պատրաստվում եւ ուժեղ հարվածների ժամանակ այն դեֆորմացիայի չի ենթարկվում, փրկելով մարզիկների կյանքը»: Ճավոմ, այս հոդվածը գրելուց ուղիղ 48 ժամ հետո տեղի ունեցավ աշխարհի բազմակի չեմպիոն Աերտոն Սենայի արկածը:

«1994 թ. մայիսի 1-ը «Ֆորմուլա-1-ի» պատմության մեջ կգրվի իբրեւ սեւ օր, Սենայի հետ կատարված դեպքից հետո, այսպես էր սկսել իր հերթական հոդվածը մեր մեծանուն թղթակիցը: Սան-Մարինոյի «Մեծ մրցանակի» հետ մեծ հույսեր կապելով, Սենան իր մեքենայով գրաղեցրել էր ամենալավ դիրք, բայց նախազգացումներ տանջում էին նրան: 7-րդ վազքում, երբ նրա «Ռիկ լոմս-Ռենո» մակնիշի մեքենան Տամբուրելո կոչված մարզադաշտում առաջ է անցնում Շումախերի մեքենայից, անհայտ պատճառով, 300 կմ/ժ արագությամբ դուրս է թռչում մարզադաշտից եւ ուժգնորեն բախվում բետոնե հաստ պատին: Հարվածը շատ ուժեղ էր ամենաբաց գլուխն էր վնասվել: Սենան շատ արյուն է կորցնում, շտապով ընկնում է խոր քնի մեջ: Ավտոյի շուրջը հավաքված տասնյակ մասնագետներ, փրկարարներ եւ բժիշկներ փորձում են ազատել Սենային: Գործը շատ բարդ էր: Նա բանտարկվել էր ավտոյի մեջ: Երկար վայրկյաններից հետո Սենայի մարմինը փոում են ասֆալտի վրա, եւ բժիշկները, կտրելով կոկորդը, օդ են տալիս նրան: Վերջում արդեն հայտնի պետք է դառնա, որ ամեն ինչ ավարտված է: 34 տարեկան բրազիլացի այս մեծ չեմպիոնը, որը 41 «Մեծ մրցանակներ» է շահել, պետք է մահանա: Ամբողջ աշխարհը ցնցվեց այս լուրից: Շատ շատերը լաց եղան: Բրազիլիայում բազմամիլիոն անձեր եկեղեցի մտած աղոթում էին Սենայի կյանքի փրկության համար, բայց ի զուր: Սենան լքեց այս աշխարհը, գնալով մահացած չեմպիոնների աշխարհ, որ իրեն սպասում են Ջիմ Կլարկը, Ժիլ Վիլնյուվը, Ֆրանսուա Սեվերը «Ֆորմուլա-1-ի» մեծ զոհերը: Երբ մահվան լուրն ադեն հայտնի էր, Բրազիլիայի մարզադաշտերում, նույն թվում «Մարականայում» 1 ոտքն բեղեռասվեցին ֆուտբոլային հանդիպումներ: Բրազիլիան 3 օրով սուգ հայտարարեց ամբողջ երկրում: Մահացել էր մի առասպել Աերտոն Սենան, որը սիրում էր Աստծուն, Բրազիլիան եւ իր ընտանիքը»:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

Գ. Գրիգորյանը «Տուլայի մեծ մրցանակի» տեր

«Տուլայի մեծ մրցանակի» համար հեծանվավազքի միջազգային մրցումներում կրկին աշխի ընկավ 21-ամյա Գրիգոր Գրիգորյանը: Տուլայի հայտնի հեծանվահրապարակում նա հաղթող դարձավ 100 շրջան խմբային հեծանվավազքում եւ 3-րդ տեղը գրավեց սպրինտում: «Գրիգորն արագաուժային գերազանց հատկություններ ունի, որոնք վաղ արտահայտվում են հրապարակային հեծանվավազքի մրցումներում, հատկապես իր նախասիրած ձեւում՝ տեղից 1000 մետր գլուխ», Սնարքի թղթակցին ասաց Հայաստանի հավաքականի ավագ մարզիչ, հանրապետության վաստակավոր մարզիչ Արսեն Խաչատրյանը: Ի դեպ, Տուլայի այս տարվա մրցումներում այդ մարզաձեւի մեկնարկը չտրվեց անձրեւային եղանակի պատճառով: Իսկ անցյալ տարի Գրիգորյանի հաղթանակը գիտում չայնորեն գովազդվել էր Տուլայի սաքանալի կողմից, հայաստանցի հեծանվորդին անվանելով «գիտի արա»: «Երեքունի» հանրապետական մարզական կենտրոնի սան Գրիգորյանը ներկայացնում է «Հայաստան» արհմիութենական սպորտընկերությունը: Շուտով նա հանդես է գալու Բուլղարիայում կայանալիք միջազգային մրցումներում: Իսկ առջեւում տարվա գլխավոր մենակարգն է աշխարհի առաջնությունը, որն օգոստոսի 17-ին սկսվելու է Իտալիայի Պալերմո առաջարանում:

ԵՎՐՈՊԱ-94

Ծանրորդները հովանավորներ են փնտրում

Եվրոպայի առաջնությունում հայ ծանրորդները բիծային հաշվարկով գրավեցին պատվավոր 5-րդ տեղը, իրենցից առաջ թողնելով միայն Ուկրաինայի, Բուլղարիայի, Թուրքիայի եւ Ռուսաստանի հավաքականներին: Սակայն Չեխիայի Սոկոլով քաղաքի մրցահարթակ դուրս եկան Հայաստանի ընտրամեջը 7 մարզիկներ: Այդ այն դեպքում, երբ մյուս բիմերը հանդես եկան 10-ական ծանրորդներով: Մեդալների թվով Հայաստանի հավաքականը նույնպես 5-րդ տեղում է (2 ոսկե, 2 արծաթե, 3 բրոնզե):

«Գյումրեցի օլիմպիական չեմպիոն Իսրայել Միլիսոյանը (75 կգ) հանդես գալով որոշ ընդմիջումից հետո, աշխարհի ռեկորդ սահմանեց պոկում վարժությունում (157,5 կգ) եւ նվաճեց ոսկե մեդալ. Սնարքի թղթակցի հետ զրույցում ասաց հանրապետական սպորտավարչության ավագ մարզիչ, ծանրամարտի Հայաստանի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Հենրիկ Գրիգորյանը: Սակայն հրում վարժությունում նրան անհաջողություն էր սպասում: Չնայած երկրորդ փորձի ժամանակ Միլիսոյանը բարձրացրեց 180 կգ ծանրաձողը, սակայն մրցավարները քաշը չարձանագրեցին: Մեկական բրոնզե մեդալներ նվաճեցին երեւանցիներ Էդուարդ Դարբինյանը (64 կգ) եւ Հայկ Դազարյանը (70 կգ): (Մեր մյուս ծանրորդների արդյունքների մասին «Ազգը» վաղուց է գրել):

3 բրոնզե մեդալ ստացավ նախկին հայաստանցի ծանրորդ, գյումրեցի Հակոբ Բուլանյանը (54 կգ), որը հիմա Պոլադիս Ակոռիս անունով հանդես է գալիս Հունաստանի դրոշի ներքո: Մոսկովյան օլիմպիադայի արծաթե մեդալակիր Յուրի Սարգսյանը, որը հիմա պայմանագրով մարզվում է ավստրալիական ակումբներից մեկում, մտադիր է աշխարհի առաջնությունից առաջ հանդես գալ Հայաստանի գավաթի խաղարկությունում, որի արդյունքներով կազմավորվելու է հանրապետության հավաքականը: Մեր մյուս փորձառու մարզիկը՝ օլիմպիական չեմպիոն Օգսեն Միրզոյանը մարզվում է ինքնուրույն եւ նույնպես պատրաստվում է Հայաստանի գավաթի խաղարկությանը: Մենք մեծ հույսեր ենք կապում երիտասարդ ծանրորդներ Արա Վարդանյանի (Արմավիրի շրջան), Աշոտ Դանիելյանի (Երեւան), Կարեն Իգիթյանի (Արթիկ), Արթուր Ստեփանյանի (Գյումրի) եւ երեւանցի Արսեն Սելիմյանի հետ: Հիմա մենք հնարավորություններ չունենք կազմակերպելու տուրքարյա նպատակամղված մարզումներ: Ծանրամարտը, հիանալի ավանդույթներ ունենալով մեր հանրապետությունում, հովանավորների կարիք ունի»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառում եմ 4 սենյականոց բնակարան: Հասցեն Դավիթաշեն, 2-րդ բաղամաս, 3-րդ շենք, բն. 4 (2-րդ հարկ)

հետ՝ 286091 (*զանգահարել միայն ցերեկվա ժամը 2-ի*):

ՖՈՒՏԲՈԼ

ՀՄՄ-ն նորից անհաջողության է մատնվում

Լիբանանի գավաթի խաղարկության եզրափակիչում Բեյրութի ՀՄՄ հայկական բիմը ուժեղ չափեց Լիբանանի չեմպիոն «Անսարի» հետ: Ստացված տեղեկություններ հասանելի, խաղն անցել է կոշտ պայքարում, եղել են վեճեր, որի պատճառով հանդիպումը մի քանի անգամ ընդհատվել է: 4-1 հաշվով հաղթանակ է տարել «Անսարը»:

ՀՄՄ-ն երկրորդ տարին անընդմեջ եզրափակիչի ուղեգիր ձեռք բերելով, չկարողացավ տիրել պատվավոր գավաթին: Հիշեցնենք, որ անցյալ տարի եզրափակիչ 3 հանդիպումներից հետո միայն ՀՄՄ-ն զիջեց «Բարժ»-ին:

Բանվոր վարում է
ՍՊԻՐՈՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

ՈՒՇԱԳԻՐՈՒԹՅՈՒՆ

Բրանի Բալամական Հանրապետության դեսպանատանը հարկավոր է առանձնատուն կամ բնակարան (ցանկալի է II-III հարկերում), հարմարավետ կահույքով, մշտական ջրամատակարարմամբ, էլեկտրական էներգիայով եւ ավտոնավով:

Նախընտրելի է Բաղրամյանի, Կոմիտասի եւ Հր. Քոչարի հատվածներում:

Դիմել Բրանի Բալամական Հանրապետության դեսպանատուն:

Հասցեն Երեւան, Բաղրամյան 1
Հեռախոս 23-58-33, 28-04-57, 52-98-30

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՎՐԱՍՏԱՆ

ՄԱԿ-ում նոր կոնֆեդերացիայի ծրագիր

ԹԲԻԼԻՍԻ, 17 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ինչպես «Ազատություն» ռադիոկայանի թղթակցին հայտնեց Վրաստանի նախկին նախագահ Գամսախուրդիայի ներկայացուցիչ Սիրաձեն, մի քանի շաբաթ առաջ ինքը հավատի արքյուրներից տեղեկություն է ստացել, որ ՄԱԿ-ում գոյություն ունի Հարավային Կովկասի ինչ-որ համադաշնություն ստեղծելու ծրագիր: Աբխազները եւ օսերը համաձայն են դրան: Սիրաձեի կարծիքով, խոսքը փաստորեն Վրաստանի ոչնչացումը լուծարելու եւ երբանում նոր կազմավորում ստեղծելու մասին է: «Բանակցություններում աբխազների դիրքորոշումը վկայում է այդ ծրագրի գոյության մասին, եւ Մոսկվայի բանակցությունները վարվում են Աբխազիայի փաստական անկախությունը իրավաբանորեն օրինականացնելու նպատակով: Սոանց Շեւարդնաձեի վարչակազմի մասնակցության անհնար է իրագործել այդ ծրագիրը, եւ Թբիլիսիում շատ են ափսոսել դրա վրա», հայտարարեց Սիրաձեն:

ՀՈՆՔԱՎԱՔ

Հայաստանի ցեղասպանական կոմիտեությունը մայիսի 22-ին, ժ. 3-ին, օպերայի հրապարակում հրավիրում է համերաշխություն, ճնարկելու Հայաստանի քաղաքացու իրավունքների, պատասխանատվությունների, ձեռքբերումի նոր հասարակության մեջ նրա տեղի հարցերը:

ՄՈՍԿՎԱ

Պավել Գրաչով. Ռուսաստանը միջուկային զենք չի գործադրի

ՄՈՍԿՎԱ, 17 ՄԱՅԻՍ, ՌԻԱ-ՄՆԱՐՔ. «Բոլոսել կատարելիք իմ այցը ոչամանավորված է ՆԱՏՕ-ի եւ Հյուսիսատլանտյան դաշինքի երկրների ղեկավարության այն խնդրանքներով, որ մենք ոչամենք Ռուսաստանի ռազմական նոր դոկտրինայի հիմունքների մասին», հայտարարեց Ռուսաստանի պաշտպանության նախարար, բանակի գեներալ Պավել Գրաչովը: Նրա կարծիքով, եվրոպական ընկերակցությունը ամենից ավելի հետաքրքրում է այն, թե Ռուսաստանը ում դեմ կարող է միջուկային զենք գործադրել: «Մենք մտադիր չենք այդ անել, ընդգծեց պաշտպանության նախարարը: Միջուկային զենքը միայն Ռուսաստանի անվտանգության երաշխիք է, կայունության ապահովման միջոց»:

Մյուս կողմից, Ռուսաստանի եւ Արգենտինայի հարաբերությունները թեւակոխել են սեռ համագործակցության նոր փուլ: Այդ մասին այսօր հայտարարեց Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը պաշտոնական այցով Ռուսաստանում գտնվող իր արգենտինացի պաշտոնակից Գիդո դի Տելլայի հետ բանակցություններն սկսելիս: Կոզիրեւը ընդգծեց այն մեծ կարեւորությունը, որ Ռուսաստանը տալիս է այդ այցին: Նա նաեւ նշեց, որ զգալի թվով ռուսներ ապրում են Արգենտինայում եւ որ ռուս-արգենտինական փոխգործակցության պաշտպանությունը հասնում է դարերի խորը: Արգենտինայի հետ Ռուսաստանի հարաբերությունները ամբողջ Լատինական Ամերիկայի հետ հարաբերությունների զարգացման կարեւորագույն տարր են, նկատի ունենալով այդ երկրում Արգենտինայի կշիռն ու ազդեցությունը, նշեց Ռուսաստանի արտգործնախարարը:

ԱՇԽԱՐՀ

Ալեխի Բ-ն դեմ է պատժամիջոցներին

ԲԵԼԳՐԱԴ, 16 ՄԱՅԻՍ, ՌԻԱ-ՄՆԱՐՔ. Հարավսլավիայի դեմ ուղղված ՄԱԿ-ի պատժամիջոցները «միակողմանի եւ անարդարացավոր» անվանեց Մոսկվայի եւ համայն Ռուսիա պատրիարք Ալեխի Բ-ն: Լրագրողներին տված հարցազրույցում նախկին Հարավսլավիա այցելած ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդը հայտարարեց, որ ՄԱԿ-ի պատժամիջոցները ոչ միայն խաղաղություն չբերեցին այդ երկրին, այլեւ, ընդհակառակն լրացուցիչ դիմակայություն ստեղծեցին, դաժանորեն հարվածելով հասարակ մարդկանց:

Ալեխի Բ-ն Սերբիայի պատրիարք Պավլեին, խորվաթ կաթոլիկների հոգեւոր առաջնորդ կարդինալ Կոխարչեկին եւ բոսնիացի մահմեդականների առաջնորդ Մուսաֆթա Ցերիչին առաջարկեց բանակցությունների սեղանի շուրջ նստել ճնարկելու այն դերը, որ հոգեւոր առաջնորդները կարող են խաղալ Հարավսլավիայի ճգնաժամի հաղթահարման մեջ:

Ղալին 5500 զոհ է ողջակիզում Ռուանդա

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 17 ՄԱՅԻՍ, WSJ, BBC. Թուցի ցեղասպանին պատկանող ընթրոսներն այսօր փակեցին մայրաքաղաք Քիգալիից փախուստի վերջին ճանապարհը կառավարական ուժերի եւ հուտու ցեղասպանի անդամների առաջ, մինչ միջազգային առաջին օգնությունը վերջապես հասավ տասնյակ հազարավոր փախստականների, որոնք հավաքվել են Ջիտարմա քաղաքի ստադիոնում: Ինչ վերաբերում է բախումների զոհերի թվին, ըստ որոշ տվյալների, այն անցնում է 100 հազարը: Ջարդերին վերջ տալու համար Վաշինգտոնը համաձայնվեց, որ ՄԱԿ-ի 150 դիտորդներ եւ մի քանի հարյուր չինացի զինվորներ առաքվեն Ռուանդա, ուժեղացնելու տեղի փոքրաթիվ խաղաղապահ ուժերը: Իր հերթին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին անբավարար համարեց այդ եռյուսանցքեց 5500-ի բարձրացնել խաղաղապահների թիվը, ինչին Մ. Նահանգների կառավարությունը սկզբունքային համաձայնություն տվեց:

Շեւարդնաձե. Վրաստանը չի կարող զենքով լուծել Աբխազիայի խնդիրը

ՄՈՍԿՎԱ, 17 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ինչպես երեկ հաղորդեց «Ռուսաստանի ձայն» ռադիոկայանը, Շեւարդնաձեն մի կողմից վրաց-աբխազական համաձայնագրում նկատում է Վրաստանի շահերի որոշ ոտնահարում, մյուս կողմից հայտարարում է. «Վրաստանը հնարավորություն չունի ռազմական միջոցներով լուծելու աբխազական հանգույցը եւ ոչնչի է ընդունի համաձայնագիր»:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Կրիչանովսկայա. Այժմ կառավարող ընտրախավն ավելի ուժեղ է

ՄՈՍԿՎԱ, 16 ՄԱՅԻՍ, ՌԻԱ-ՄՆԱՐՔ. Ներկայումս Ռուսաստանում կառավարող ընտրախավն ավելի ջահել եւ ուժեղ է, քան Բրեժնեւի եւ Գորբաչովի ղեկավարման տարիներին: Այս մասին հայտնեց Ռուսաստանի ԳԱ սոցիոլոգիայի ինստիտուտի ընտրախավի հետազոտման բաժնի վարիչ Օլգա Կրիչանովսկայան:

Նշելով ուսումնասիրելի անցման ժամանակաշրջանի տնտեսագիտական խնդիրների ինստիտուտի գիտաժողովում, նա ասաց, որ Բրեժնեւյան ընտրախավի միջին տարիքը 56.6 է, Գորբաչովյան ընտրախավինը՝ 51.2, իսկ Եելցինի օրոք դա կազմում է 48.5: Բրեժնեւի օրոք բարձրագույն կրթություն ունեցողներ նոմենկլատուրային աշխատողների 88.8 տոկոսը, Գորբաչովի օրոք 84.1, Եելցինի օրոք 97.4 տոկոսը: Ռուսաստանի այժմյան նախագահի շրջապատում կրկնակի աճել է գիտական կոչում ունեցողների թիվը: Բրեժնեւի եւ Գորբաչովի ժամանակահատվածների համեմատությամբ: Բրեժնեւի օրոք իշխանություն ունեին ավելի շատ տեխնոկրատներ, իսկ այժմ շատ են հումանիտար կրթություն ունեցողներ, խորհրդարանում 8 անգամ ավելացել է իրավաբանների թիվը:

Կրիչանովսկայան նաեւ նշեց, որ Բրեժնեւի օրոք ոչ ռուս ազգության բարձրաստիճան պաշտոնյաների բաժինը կազմում էր 30.1, Գորբաչովի օրոք՝ 36.3 տոկոս: Այժմ այդ ցուցանիշը 21.1 տոկոս է: Սոցիոլոգի խոսքերով, «Ռուսաստանի ներկայիս կառավարող ընտրախավում ռուսներից բացի մնացել են հիմնականում ուկրաինացիներ, բելառուսներ եւ հրեաներ: Ըստ որում, ընտրախավի ռուսականացումը շարունակվում է»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառվում է երկու սենյականոց բնակարան, ավտոնակով. Կոմիտասի պողոտայում. Բաց թող դպրոցի մոտ, 14 հարկանի շենքի 13-րդ հարկում: Հնարավոր է նաեւ փոխանակում 3 սենյականոցի հետ:

Դիմել 52.92.21 հեռախոսով:

Եղանակը Հայաստանում



ՀԱՄԱՌՈՏ

Նախագահական ընտրությունները Բելառուսում

ՄԻՆՍԿ, 17 ՄԱՅԻՍ, ՓԱՍՏ. Բելառուսի նախագահական ընտրություններում գրանցվեց հերթական փուլի ավարտը: Մայիսի 16-ին ավարտվեց թեկնածուների առաջադրումը: Միայն տասն օր հետո՝ մայիսի 26-ին, կենտրոնական ընտրական հանձնաժողովը կհրապարակի այն թեկնածուների անունները, որոնք հաղթահարել են 100.000 ընտրողների ստորագրությունների արգելքը: Քաղաքական դիտորդների կարծիքով, առաջիկա ընտրություններում հաղթելու առավելագույն հնարավորությունները ցահոպանում է երկրի վարչապետ Վ. Կեբիչը:

Աբխազիայի վրացիների տները բնակեցվում են

ՄՈՍԿՎԱ, 17 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. «Մայակ» ռադիոկայանի հաղորդման համաձայն աբխազների համար ծեռնտու է խաղաղ կարգավորման ճգնաժամը, քանի որ շարունակվում է Աբխազիայից փախած 200 հազար վրացիների տներում ու հողամասերում նախկին ԽՍՀՄ-ի, Սիրիայի, Հորդանանի, Թուրքիայի քաղաքացիների անօրինական հաստեղ բնակեցումը: Դրանով Արծինբան փորձում է էլ ավելի միջազգայնացնել եւ բարդացնել հակամարտությունը:

Սերգեյ Շախրայը հրաժարականի դիմում է գրել

ՄՈՍԿՎԱ, 17 ՄԱՅԻՍ, ՌԻԱ-ՍՆԱՐՔ. Ռուսաստանի փոխվարչապետ Սերգեյ Շախրայը նախագահ Բորիս Եելցինին եւ վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինին հրաժարականի դիմում է գրել: Այդ մասին Շախրայը հայտարարեց այսօր Ռուսաստանի ԱԳՆ մամլո կենտրոնում կայացած բրիֆինգում: Իր հրաժարականի պատճառների թվում Սերգեյ Շախրայը նշեց այն փաստը, որ ազգությունների գործերի եւ տարածքային հաղթահարման նոր նախարար Նիկոլայ Եգորովը նշանակվել է նույնիսկ առանց պատշաճաչափ իր հետ համաձայնեցնելու, մինչդեռ ինքը պատասխանատու է այդ նշանակման համար:

NAVI
AIRCORPORATION
Ամեն ուրբաթ ուղիղ ավիաչվերթ
ԵՐԵՎԱՆ-ՕՍԱԿ
Մեր հասցեն՝ «Սեւան» հյուրանոց, 120 սենյակ: Հեռ. 56.49.78. 58.26.53
A STYLE

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՐԿ

«Ազգ» թերթի լրատվության բաժնին անհրաժեշտ են աշխատակիցներ, որոնք բացի հայերենի եւ ռուսերենի գրագետ իմացությունից, տիրապետում են նաեւ օտար լեզուներից՝ նախընտրաբար անգլերեն եւ ֆրանսերեն: Աշխատակիցների հետաքրքրության շրջանակներում պիտի լինեն միջազգային իրադարձությունները, որոնց մեջ նաեւ նախկին Խ. Միության տարածքում տեղի ունեցողները: Աշխատանքային պայմանների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել «Ազգ» թերթ, Պավել Դալլաքյանին: Հեռ. 58.18.41:

NELLI-2
ԲԵՅՐՈՒԹԻ «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ», ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ «ՆԵԼԼԻ-2» ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է
ԵՐԵՎԱՆ-ԲԵՅՐՈՒԹ-ԵՐԵՎԱՆ
ՈՒՂԻՂ ՉՎԵՐԹՈՎ ԳՐԱՎԻՉ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ
ԹՎԵՐԿԱՅԻՆ 7 ԵՎ 15 ՕՐՈՎ:
Նուշիանովում է բարձր մակարդակի սպասարկում, առաջնակարգ հյուրանոց, սնունդ եւ ուղեւորություններ Լիբանանի տեսարժան վայրերը
ՈՒՐԱՀԱՏԵՍԱՆ 15 ՕՐՈՎ:
Մասնակ սենյակի եւ հյուրանոցի արդանվում 1.6 մարդուց միջոցներ:
Հասցեն «Էրեբունի» հյուրանոց գլխ. մասնաճյուղ 4-դ հարկ 455 սենյակ
Հեռ. 56.02.77/ 68.54.79
A STYLE

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23 Արամի փող. 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 15 000. Պատվեր 1758 Ստորագրված է տպագրության՝ 17.05.1994 Գինը՝ 5 դրամ

digitised by A.R.A.R.@